

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱ-
ՆՈՒԹՅԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1922-Ն որոշման 14.5 կետին համապատասխան՝

Հավանություն տալ

ա) Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարությանը՝ համաձայն N 1 հավելվածի,

բ) Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների ծրագրին և միջոցառումների ցանկին՝ համաձայն N 2 հավելվածի:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2006-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական վերափոխումների և պետականության ամրապնդման մեր ժամանակներում արմատապես փոխվում են ոչ միայն տնտեսության, այլև հասարակական հարաբերությունների, բարոյահոգեբանական արժեքների համակարգերը: Կատարված փոփոխություններն ստեղծում են միանգամայն նոր իրավիճակ, որն ունի իրեն հատուկ զարգացման օրինաչափությունները:

Խորհրդային Միության փլուզումից հետո ստեղծված երիտասարդական կազմակերպությունները երիտասարդության փոքր մասն էին ընդգրկում և միմյանց գոյության մասին տեղեկություն անգամ չունեին: Երիտասարդական քաղաքականության իրականացման մի շարք գործառույթներ կազմակերպություններն իրենք էին տարերայնորեն հանձն առել՝ առանց պետական համակարգված, նպատակաուղղված աջակցության: Երիտասարդության վրա բարդվել էին ոչ միայն հասարակությանը, այլև հենց իրեն՝ երիտասարդությանը հատուկ սոցիալ-տնտեսական ու քաղաքական հիմնախնդիրներ:

Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականությունը, որ պետության կարևորագույն գործառույթներից է, ունի ռազմավարական նշանակություն: Այն կոչված է ստեղծելու ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից, հայրենիքի և ժողովրդի նկատմամբ պատասխանատվության խոր գիտակցում ունեցող երիտասարդ սերնդի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ:

Պետական երիտասարդական քաղաքականությունը երիտասարդական քաղաքականության սուբյեկտների միջոցով իրականացնում են պետական կառավարման մարմինները (**գծագիրը կցվում է**):

Այսօր երիտասարդական հասարակական դաշտը գրեթե կայացել է: Երիտասարդական հասարակական կազմակերպությունները երիտասարդական պետական քաղաքականության ամենակազմակերպված սուբյեկտն են և մշտապես պետք է լինեն երիտասարդական պետական քաղաքականության կրողն ու իրականացման գլխավոր միջոցը:

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունն է: Նախարարության աշխատակազմում 1995թ. ստեղծվել է երիտասարդության հարցերի (այժմ՝ երիտասարդական քաղաքականության) վարչությունը, ինչը երիտասարդական հասարակական դաշտի կարևորագույն ձեռքբերումներից է:

Հայաստանի Հանրապետությունում բարեփոխումներին զուգահեռ՝ երիտասարդական քաղաքականության արդյունավետ իրականացումը պահանջում է համակողմանիորեն մշակված գործողությունների համալիր ծրագիր, որը հնարավոր է միայն երիտասարդության շրջանում հետազոտական աշխատանքներ կազմակերպելու, հասարակական կազմակերպություններին պետական

քաղաքականության ձևավորմանը և իրագործմանը ներգրավելու պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համագործակցելու ճանապարհով: Այս հարցում առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 734 որոշմամբ ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Այժմ երիտասարդության հարցերի խորհուրդներ են ստեղծվում Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին կից, որոնց նպատակը տեղերում երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների գործունե գործունե ներգրավվածության և մասնակցության ապահովումն է, երիտասարդությանն առնչվող որոշումների կայացումը և դրանց իրագործումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 11-ի թիվ 520 որոշմամբ ստեղծվել է «Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» հիմնադրամը, որի նպատակն է հանրապետության, Սփյուռքի և արտասահմանի երիտասարդության համագործակցության զարգացումը, համատեղ ծրագրերի մշակումը և իրականացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 17-ի թիվ 418 որոշմամբ ստեղծվել է «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի նպատակն է երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը և իրականացումը:

Երիտասարդական քաղաքականության արդյունավետ կենսագործումը ենթադրում է իրավական դաշտի ստեղծում՝ ոլորտի գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի ընդունմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատվեց **«Պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը»**, ըստ որի երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտներ են՝

- ա) Հայաստանի Հանրապետության 16-30 տարեկան քաղաքացիները,
- բ) 16-30 տարեկան օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ այնքանով, որքանով Հայաստանի տարածքում նրանց գտնվելն առաջացնում է համապատասխան պետական մարմինների պարտավորություններ,
- գ) Հայաստանում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնց անդամների տարիքը չի անցնում 30-ից կամ որոնք զբաղված են մինչև 30 տարեկան քաղաքացիների շրջանում տարվող աշխատանքներով,
- դ) երիտասարդ ընտանիքները, եթե ամուսիններից մեկի տարիքը չի անցնում 30-ից:

Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական ներկա քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- ա) երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում պետության, հասարակության և անհատի շահերի, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների համադրում,
- բ) երիտասարդ քաղաքացիների անմիջական մասնակցության ապահովում երիտասարդությանը և ողջ հասարակությանը վերաբերող քաղաքականության և առանձին ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին,

գ) երիտասարդների առողջության պահպանման, մասնագիտական պատրաստման և աշխատանքով ապահովելու նպատակով պետության կողմից երաշխավորված սոցիալական նվազագույն ծառայությունների մատուցում,

դ) երիտասարդների ռազմահայրենասիրական ոգու բարձրացում, ազգային արժեքների արմատավորում, կրթական մակարդակի, հոգևոր և ֆիզիկական զարգացում,

ե) երիտասարդներին վերաբերող միջոցառումների և ծրագրերի ֆինանսավորման դեպքում հասարակական նախաձեռնությունների առաջնայնություն՝ պետական մարմինների և հաստատությունների համապատասխան գործունեության համեմատ:

Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը մշակել է «Պետական երիտասարդական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ին կայացած նիստում հավանության է արժանացել և օրենքով սահմանված կարգով ներկայացվել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Երիտասարդական պետական քաղաքականության գլխավոր նպատակն է՝ *ստեղծել սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:*

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և հատկապես երիտասարդները պետք է հիմնական հմտություններ ձեռք բերելու և դրանք զարգացնելու հնարավորություն ունենան: Պետք է կարողանան խնդիրներ հետազոտել և լուծել, կատարելագործել հմտությունները, օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, տիրապետեն մայրենի լեզվին, միաժամանակ, խոսեն օտար լեզուներով, ունենան պետական և ազգային մտածողություն, լինեն ֆիզիկապես կոփված, եռանդուն, ազատ և պատասխանատու քաղաքացիներ, որոնց համար գերակա են ազգային ավանդույթների պահպանումը և զարգացումը, Հայաստանի Հանրապետության հզորացումը:

Բնական սահմանափակ պաշարներ ունեցող Հայաստանի կառավարման ոլորտում կարևոր նշանակություն ունի մարդկային գործոնը: Երիտասարդները, որոնք Հայաստանի Հանրապետության բնակչության մեկ քառորդն են (25%), երկրի կարևորագույն ներուժն են:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը նշում է այն ոլորտները, որոնցում կատարված ներդրումները կարող են շոշափելի արդյունքներ տալ:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը հիմնված է այն գիտակցության վրա, որ երիտասարդները արժեք են, հասարակության կարևորագույն ներուժը և նրանց պետք է ազատ, բազմակողմանի զարգացած, առողջ և պատասխանատու քաղաքացիներ դառնալու հնարավորություն ընձեռել:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության իրականացման շահառուն հասարակությունն է, որը կունենա ավելի ակտիվ և որակյալ մարդկային ռեսուրս, ինչը Հայաստանի Հանրապետության համար տնտեսական և սոցիալական զարգացման նոր հեռանկարներ կբացի: Այն ելնում է երիտասարդության կարիքներից և գործելու է ի շահ նրա:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նպատակն է՝ բարելավել երիտասարդների կենսապայմանները, կազմակերպել նրանց հանգիստը և բարձրացնել նրանց մասնակցության աստիճանը հասարակական, քաղաքական զարգացումներին: Այն ներառում է երիտասարդներին առնչվող հասարակական-քաղաքական, սոցիալական և մշակութային խնդիրներ: Սույն ռազմավարության մեջ երիտասարդությունը անմիջական շահառու է և ծավալվող գործընթացներում իր ավանդը ներդնող կարևոր մասնակից:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության կարևոր նպատակներից է նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համատեքստում կառավարության՝ երիտասարդներին առնչվող գործողությունների լայն շրջանակ ձևավորելը, ըստ որի՝ կառավարությունը նրանց բնորոշ գերակայություններ կսահմանի առաջիկա տարիների համար՝

- ա) ծառայությունների և տեղեկատվության մատչելիության բարելավում,
- բ) հասարակական-քաղաքական կյանքին մասնակցություն,
- գ) երիտասարդների զբաղվածության ապահովում,
- դ) երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ հնարավորությունների ընդլայնում և երիտասարդների մասին իրազեկվածության աստիճանի բարձրացում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Իրադրության վերլուծություն. երիտասարդները Հայաստանում

1. Երիտասարդության վիճակի նկարագրություն

Համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 16-30 տարեկան բնակչության թվաքանակը կազմել է 779361 մարդ, որն ընդհանուր բնակչության 24,3%-ն է: Տնտեսական անկումը, սոցիալական անհավասարության խորացումը, ավանդական արժեքների քայքայումը և գործազրկության բարձր աստիճանը անկախության առաջին շրջանում վատթարացրել են Հայաստանի բնակչության համարյա բոլոր շերտերի, այդ թվում՝ երիտասարդ սերնդի կենսապայմանները՝ իջեցնելով նրանց կենսամակարդակը: Ըստ բարեկեցության մակարդակի՝ բնակչությունը բաժանվում է երեք հիմնական խմբի՝ ոչ աղքատ, աղքատ և շատ աղքատ:

Ոչ աղքատ է համարվում բնակչության այն մասը, որի մեկ շնչին ընկնող ամսական ծախսերը բարձր են աղքատության ընդհանուր գծից:

Աղքատ՝ այն մասը, որի ծախսերը ցածր են հիշյալ մեծությունից և շատ աղքատ են նրանք, որոնց մեկ շնչին ընկնող ամսական ծախսերը ցածր են աղքատության պարենային գծից:

Աղքատության հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ աղքատ բնակչության թվաքանակը, 1996 թվականի համեմատությամբ, 2003 թվականին ավելացել է 11,8 տոկոսային կետով (1996թ.՝ 45,3%, 2003թ.՝ 57,1%), աղքատ բնակչության թիվն աճել է 8,5 տոկոսային

կետով (1996թ.՝ 27%, 2003թ.՝ 35,5%): Աղքատ բնակչության շարքը առավելապես համալրվել է շատ աղքատ բնակչության թվաքանակի կրճատման հաշվին, որը 1996թ. կազմել է 27,7%, իսկ 2003թ.՝ 7,4%:

Ստորև բերված են Հայաստանի Հանրապետությունում աղքատության հիմնական ցուցանիշները ըստ տարիքային խմբերի արտացոլող տվյալները:

Աղյուսակ I

Աղքատության հիմնական ցուցանիշները ըստ տարիքային խմբերի՝ տոկոսներով, 2003թ.

<i>Տարիքային խմբեր</i>	<i>Ոչ աղքատ</i>	<i>Աղքատ</i>	<i>Շատ աղքատ</i>
Մինչև 7 տար.	45,7	42,8	11,5
7-16	52,3	39,0	8,7
17-22	59,7	34,3	6,0
23-29	56,0	37,4	6,6
30-39	54,6	36,5	8,9
40-49	62,8	31,1	6,1
50-59	66,1	29,3	4,6
60 և բարձր	59,8	33,3	6,9
Ընդամենը	57,1	35,5	7,4

Երկրի երիտասարդության հրատապ հիմնախնդիրները ճանաչելու նպատակով վիճակագրական տվյալները և հանրային հարցումները համակարգված են, ինչի շնորհիվ դիտարկման համար ընտրվել են սոցիալ-տնտեսական, կրթության, դաստիարակության, առողջապահության, քաղաքացիական ակտիվության բնագավառները:

1.1. Սոցիալ-տնտեսական ոլորտ

Տնտեսական հիմնախնդիրները և աղքատությունն ուղղակիորեն ազդում են կրթության և առողջապահության ոլորտների, երիտասարդությանը աշխատատեղեր և բնակելի տարածք տրամադրելու վրա, որոնք իրենց հերթին այլ խնդիրներ են առաջացնում՝ գործազրկություն, արտագաղթ, մարդկանց առևտուր (թրաֆիքինգ), անչափահասների հանցագործություն և երիտասարդների որոշ խմբերի եզրայնացում (մարզինալացում):

1.1.1. Գործազրկություն

Ըստ պաշտոնական տվյալների՝ 2003 թվականին տնտեսապես ակտիվ մշտական բնակչության 9.3%-ը եղել է գործազուրկ: Անցումը շուկայական տնտեսության գործազրկության բարձր մակարդակ է պայմանավորել նաև երիտասարդության շրջանում: 2003 թվականին երիտասարդությունը Հայաստանում կազմում էր երկրի տնտեսապես ակտիվ բնակչության 66.7%-ը՝ միևնույն ժամանակ լինելով հասարակության՝ գործազրկությունից առավել տուժող մասը: Երիտասարդների գործազրկությունն ավելացնում է արտագաղթողների թիվը և ասոցիալ երևույթների տարածումը:

Գիտելիքների և փորձի պակասի հետևանքով աշխատանքի ընդունվելու հնարավորությունները երիտասարդների համար շատ քիչ են, ինչի պատճառով նրանց մեծամասնությունը չի օգտվում տնտեսական այն հնարավորություններից, որ ընձեռում է շուկայական տնտեսությունը: Գործազրկությունն ազդում է երիտասարդների վրա, ստիպում նրանց կորցնել վստահությունն իրենց ուժերի և

ունակությունների նկատմամբ, հետևաբար՝ բացասական ազդեցություն ունի և՛ նրանց, և՛ ողջ հասարակության վրա:

Եթե տնտեսապես ակտիվ բնակչության համար զբաղվածությունն էական նշանակություն ունի, ապա մտավոր ու ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող անձանց համար այն դառնում է կենսական անհրաժեշտություն: Հաշմանդամների համար զբաղվածությունը նախևառաջ նշանակում է տնտեսական անկախություն, ինքնադրսևորվելու հնարավորություն, քանզի այդ պարագայում նրանք սոցիալական խնամառության կրավորական պահանջատերից վերածվում են ինքնապահովման գործընթացի ակտիվ մասնակիցների:

Գործազուրկ երիտասարդների թվի աճի հիմնական պատճառներն են՝

- ա) երիտասարդների տնտեսական գուրծունեությունը խթանող գործուն լծակների բացակայությունը,
- բ) մասնագիտական և տնտեսական սահմանափակ հնարավորությունները և անբավարար խթանները,
- գ) կյանքին երիտասարդների անբավարար պատրաստվածությունը (իրականության մեջ իրենց տեղը գտնելու, ինքնադրսևորվելու, ինքնահաստատվելու, իրենց ներկայացնելու, հաղորդակցվելու ունակություններ և այլն), ինչը նպաստում է նրանց սոցիալական մերժմանը և եզրայնացմանը,
- դ) բյուրոկրատական համակարգի առկայությունը, հովանավորչության, կոռուպցիայի առկայությունը, պետական մարմինների նկատմամբ վստահության պակասը:

1.1.2. Արտագաղթը և մարդկանց առևտուրը (թրաֆիքինգ)

Արտագաղթը Հայաստանում բավականին տարածված բնույթ է կրում: Անցած դարի 90-ական թվականներից Հայաստանի Հանրապետությունից արտագաղթել է բնակչության շուրջ 20-22%-ը, կամ 800 հազարից 1 մլն մարդ, որոնք արտերկրում են ինչպես օրինական, այնպես էլ անօրինական կարգավիճակով: Այսօր մարդիկ տեղաշարժվում են տարբեր պատճառներով, որոնցից գերակշռում է տնտեսական գործոնը:

Հայաստանի Հանրապետությունից մեկնողների շրջանում շատ են աշխատանքային տարիքի անձինք (տղամարդկանց թիվն ավելի շատ է՝ 64,5%): Միգրացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ՄՄԿ) 2002 թվականի զեկույցի համաձայն, այն հարցին, թե արտասահման գնալու հնարավորության դեպքում ի՞նչ պատճառով կլքեին իրենց երկիրը, երիտասարդների 58%-ը պատասխանել է՝ ընտանիքը ֆինանսապես ապահովելու, 45%-ը՝ կենսամակարդակը բարձրացնելու, 33%-ը՝ մշտական բնակավայր գտնելու, 5%-ը՝ այլ պատճառով: Միաժամանակ՝ որոշ երկրներ խստացրել են սահմանային ռեժիմը և մուտքի արտոնման պահանջները, աշխարհի շատ մասերում օրինական միգրացիայի հնարավորությունները նվազել են: Սակայն մուտքի երկրներում օտարերկրյա աշխատուժի որոշ տեսակների համար դեռևս նկատելի պահանջարկ կա: Այս գործոնների առկայությունը հանգեցրել է անօրինական միգրացիայի և միգրանտների անօրինական փոխադրումների կտրուկ աճին: Հաճախ մարդիկ ստիպված են լինում կատարել տաժանակիր, նվաստացուցիչ աշխատանք կամ զբաղվել այլ հարկադիր աշխատանքով, նաև՝ մարմնավաճառությամբ: Այս ամենի հետևանքով տուժյալները ոչ միայն տնտեսապես են շահագործվում, այլև ոտնահարվում են նրանց հիմնարար իրավունքները:

Երևույթն ավելի շատ տարածված է երիտասարդների շրջանում, քանզի դա հասարակության այն շերտն է, որն ավելի զգայուն է կատարվող փոփոխությունների նկատմամբ, ավելի շատ է հակված ինքնադրսևորման: Հետևապես մարդկանց առևտրի թիրախ են դառնում առավելապես երիտասարդները,

որոնք երբեմն կամովի են մղվում դեպի մշուշոտ ապագա: Այս կարգի երիտասարդների շրջանում շատ են երիտասարդ կանայք և աղջիկները: Անօրինական միգրացիայի, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկվելու պատճառներից մեկը մարդկանց թյուր պատկերացումն է արտասահմանում սպասվելիքի վերաբերյալ:

Մարդկանց ապօրինի փոխադրմանը նպաստող գլխավոր գործոններն են՝ **տնտեսականը և սոցիալականը:**

Անօրինական փոխադրված կանանց շրջանում կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հանրապետությունում իրոք գոյություն ունի մարդկանց առևտրի երևույթը և դրա **գլխավոր դրդապատճառներն են՝**

ա) անցումային փուլի հետևանքով ստեղծված սոցիալական ծանր վիճակը,

բ) բնակչության աղքատացումը,

գ) գործազրկության բարձր մակարդակը,

դ) բավարար աշխատավարձով աշխատատեղերի բացակայությունը,

ե) գործունեության ոլորտների սահմանափակությունը,

զ) այլ երկրներում բարեկեցիկ կյանքով ապրելու ցանկությունը:

Հայաստանը դառնում է թե ելքի, թե տարանցիկ երկիր: Հանրապետությունում առայժմ չկա պաշտոնական ամբողջական տեղեկատվություն ինչպես մարդկանց առևտրի, այնպես էլ կազմակերպված մարմնավաճառության ծավալների մասին:

Այս բացը լրացնելու համար ՄՄԿ-ն և հայաստանյան մի շարք հասարակական կազմակերպություններ համապատասխան ուսումնասիրություն են կատարել, որի արդյունքները ցույց են տալիս, որ սեռական շահագործման ենթարկվածների և վաճառվածների 65%-ը 30-ից ցածր տարիքի կանայք են:

Ապօրինի փոխադրվածների գերակշիռ մասը քաղաքաբնակ է, հիմնականում՝ Երևանից (32,6%), Գյումրիից (30,26%) և Վանաձորից (18,6%): Ապօրինի փոխադրված կանանց շուրջ 50%-ի համար մուտքի երկրում արհեստականորեն ստեղծվել են այնպիսի գոյապայմաններ, որ նրանք ստիպված են եղել դիմել մարմնավաճառության, թեև մեկնողների մի մասը նախապես է իմացել, որ արտասահման է մեկնում մարմնավաճառությամբ ապրուստի միջոցներ վաստակելու նպատակով: Համաձայն ՄՄԿ-ի 2001 թվականին տպագրված «Հայաստանում կանանց և երեխաների վաճառքի մասին» զեկույցի՝ սովորական աշխատանք գտնելու հույսով մեկնել է 76,2%-ը, մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով՝ 18,6%-ը, բիզնեսի համար՝ 1,7%-ը, արձակուրդն անցկացնելու համար՝ 1,7%-ը: Մեկնողների շրջանում մեծ թիվ են կազմել ամուսին չունեցող կանայք՝ 72,1%, որից 14%-ը՝ այրի, իսկ 2,3%-ը՝ ամուսնալուծված, 11,6%-ը՝ ամուսնացած չի եղել:

Հայաստանի Հանրապետությունը ներկայումս քայլեր է ձեռնարկում, որոնք միտված են թրաֆիքինգի դեմ պայքարի օրենսդրական և իրավական կարգավորմանը: 2003թ. մարտին վավերացվել են «Կազմակերպված հանցագործության դեմ պայքարի» ՄԱԿ-ի համաձայնագիրը և թրաֆիքինգին առնչվող երկու արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ավելացվել է նոր՝ «Մարդկանց առևտուր» 132-րդ հոդվածը:

2002 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով, որի մշակած Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2004

թվականի հունվարի 15-ի N 58-Ն որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի կանխման» հայեցակարգը և «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի կանխման 2004-2006 թվականների միջոցառումների ազգային ծրագիր»-ը:

1.1.3. Հաշմանդամ և խոցելի խմբերի երիտասարդներ

Հասարակության ցածր կենսամակարդակը ծանր ազդեցություն է թողնում հատկապես սոցիալապես խոցելի խմբերի վրա, որոնց կենսական կարիքները որոշակիորեն տարբերվում են մյուս խմբերի պահանջմունքներից, իսկ դրանց բավարարումը պայմանավորված է մի շարք լրացուցիչ գործոններով: Այդ խոցելի խմբերի մեջ իրենց առանձնահատկություններով, հասարակական հարաբերություններում ինքնադրսևորվելու կարողություններով և հասարակական կյանքին մասնակցելու հնարավորություններով առանձնանում են հաշմանդամները, թափառաշրջիկները և մուրացկանները: Սոցիալական ծանր վիճակը երիտասարդներին հաճախ դրդում է հանցագործ քայլերի՝ իրենց կարիքները բավարարելու նպատակով: Ըստ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տվյալների, 2004 թվականին հանցագործություն կատարած 14-17 տարեկան երիտասարդների թիվը եղել է 383, որից 26-ը՝ նախկինում դատվածներ:

Սոցիալապես խոցելի խմբերի երիտասարդներ են մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտները, որոնց սոցիալական խնդիրների լուծմանն են ուղղված «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը: Նշված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվում է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձանց (երիտասարդներին) բնակարանով ապահովման» պետական նպատակային ծրագիրը:

Երիտասարդ հաշմանդամների մասին իրազեկության մակարդակը հասարակության մեջ շատ ցածր է: Հաշմանդամի՝ որպես հասարակության հավասար անդամի գիտակցությունը դեռ նոր է: Շատ երեխաներ մինչ այժմ էլ ընտանիքներում կամ հաստատություններում ապրում են մեկուսացված: Առաջխաղացում չկա հաշմանդամ երիտասարդներին հանրակրթական դպրոցներում տեղավորելու գործում, նրանց համար ստեղծված են հատուկ դպրոցներ:

Հաշմանդամներին և նրանց հիմնախնդիրներին առնչվող օրենսդրական դաշտի ձևավորման առաջին քայլերից մեկը եղավ 1993 թվականին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, կարգավորվում են հաշմանդամության կանխարգելման և հաշմանդամների առողջության վերականգնման, նրանց բժշկաաշխատանքային փորձաքննության, բժշկական սպասարկման և սոցիալական օգնության, աշխատանքային գործունեության, վերականգնողական պարագաներով ապահովելու, հաշմանդամ երեխաների ուսուցման ու դաստիարակության և այլ հարցեր: Երաշխավորվում է հաշմանդամների անհատական զարգացման, ընդունակությունները, իրավունքները և ազատությունները

դրսևորելու, հասարակական կյանքին մյուս քաղաքացիներին հավասար մասնակցելու պայմանների ու հնարավորությունների ապահովումը:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2003 թվականի վերջին Հայաստանում հաշվառված էր 111887 հաշմանդամ, ինչը կազմում է հանրապետության մշտական բնակչության մոտ 3,5%-ը: Այդքան մեծ թվով հաշմանդամների առկայությունը բացատրվում է 1988թ. աղետալի երկրաշարժով և պատերազմական գործողություններով:

Երիտասարդ հաշմանդամներին աշխատանքով ապահովելու առանց այն էլ բարդ խնդիրն ավելի է բարդանում մի պատճառով՝ նրանց մեծ մասը մասնագիտական կրթություն չունի կամ չի վերամասնագիտացել, բավարար չափով ծանոթ չէ հասարակական կյանքում կատարվող գործընթացներին, տնտեսական ոլորտի փոփոխություններին, շուկայական հարաբերությունների օրինաչափություններին, փոքր են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրական հնարավորությունները, որով էլ բացատրվում է սեփական գործ հիմնելու նրանց ցանկության ու ձգտման բացակայությունը:

1.1.4. Երիտասարդ ընտանիքները և նրանց բնակարանային պայմանների բարելավման խնդիրը

Հայաստանյան ընտանիքը հայտնվել է ծանր կացության մեջ: Հասարակության զարգացման օրինաչափ փոփոխությունները հանգեցրել են նրան, որ նախկինում գերակայող ավանդական ընտանիքը (գյուղաբնակ, բազմանդամ, բազմազավակ) իր տեղը զիջում է քաղաքաբնակ, մեկ-երկու երեխա ունեցող կամ երեխաներ չունեցող ամուսիններից բաղկացած ընտանիքին:

Հանրապետության բնակչության գերակշիռ մասը տարբեր կառուցվածք ունեցող ընտանիքների անդամներ են, սակայն վերջին տարիներին նկատվում է ընտանիքների անդամների թվի նվազման միտում: Երիտասարդ ընտանիքները խուսափում են մեկից կամ երկուսից ավելի երեխաներ ունենալ, որի հիմնական պատճառը տնտեսական ծանր վիճակն է:

Տևական գործազրկությունը, աղքատության բարձր մակարդակն առավել հաճախ բացասական ազդեցություն են թողնում բազմանդամ կամ թերի կազմով ընտանիքների վրա: Հատկանշական է, որ աղքատության մակարդակը պայմանավորված է ընտանիքի կազմով և խնամարկյալների քանակով: Այսպես, մինչև 5 տարեկան երեխա կամ 3 և ավելի երեխա (0-14 տարեկան) ունեցող, ինչպես նաև բազմանդամ ընտանիքներն առավել հակված են աղքատությանը: Հետազոտված ոչ աղքատ ընտանիքների միջին չափը կազմել է 3,78, մինչդեռ աղքատներինը՝ 4,69, ծայրահեղ աղքատներինը՝ 5,29: Ուշագրավ է նաև, որ մինչև 18 տարեկան, մեկ երեխա ունեցող շատ աղքատ տնային տնտեսությունները կազմել են 3,9%, երկու երեխա ունեցողները՝ 7,9%, երեք երեխա ունեցողները՝ 11,8%, չորս երեխա ունեցողները՝ 11,9%, հինգ և ավելի երեխա ունեցողները՝ 33,3%:

Ըստ Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մարդահամարի արդյունքների՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդներից ամուսնացած է 242710-ը, ամուսնալուծված՝ 10215-ը, ընդ որում՝ ամուսնացած տղամարդկանց թիվը 82401 է, ընդ որում 20-30 տարեկան 239642 երիտասարդ տղամարդկանց միայն 33,9%-ն է ընտանիք կազմում մինչև երեսուն տարեկանը:

Հանրապետությունում դեռևս լուծված չէ ընտանիքների բնակարանային խնդիրը. այն հատկապես սուր է աղետի ու սահմանամերձ գոտիներում և փախստականների ու բռնի տեղահանվածների շրջանում: Բնակելի տարածություն ձեռք բերելու գործում երիտասարդությանն աջակցելու պետական ծրագրեր չկան: Բարձր գների պաճառով երիտասարդները չեն կարողանում մասնավոր բնակելի տարածքներ ձեռք բերել, որի

հետևանքով էլ ծնվում են նոր երևույթներ՝ ուշ ամուսնություն, քիչ երեխաներ և վերջապես՝ երիտասարդ ընտանիքների ամուսնալուծության բարձր ցուցանիշ:

1.2. Երիտասարդների կրթությունը

Անցումային ժամանակաշրջանը փոփոխություններ է մտցրել նաև կրթության համակարգում: Միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ կատարվել են մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակը ժողովրդավարական հասարակություն և շուկայական տնտեսություն ստեղծելու գործում երիտասարդներին օգնելն է:

Հանրապետությունում այսօր օրախնդիր է կրթության մատչելիությունը: Պետական միջին մասնագիտական և բարձրագույն հաստատություններում զուգահեռաբար գործող պետական պատվերի և վճարովի ուսուցման համակարգերի, ինչպես նաև մասնավոր ուսումնական հաստատությունների առկայությունը թեպետ ապահովում է երիտասարդության կրթություն ստանալու հնարավորությունը, սակայն կրթությունը բարձր արժեք, իսկ կրթություն ստանալը գերագույն նպատակ համարող բազմաթիվ երիտասարդներ վճարունակ չլինելու պատճառով զրկված են այդ հնարավորությունից: Նրանց օժանդակող համակարգ հանրապետությունում չկա: Սակավաթիվ են նաև այդօրինակ պատրաստականություն ունեցող անհատները:

1.2.1. Հանրակրթություն

Հանրապետությունում 2003-2004 ուսումնական տարում գործել են 1439 պետական և 33 ոչ պետական դպրոց՝ 501886 աշակերտով (1-10-րդ դասարաններում), որոնց 49,3 %-ը աղջիկներ են: Ուսուցիչների թիվը եղել է 46548: Ուսուցումը կազմված է երեք փուլից՝ տարրական դպրոց (1-3-րդ դասարաններ), միջին դպրոց (4-8-րդ դասարաններ) և ավագ դպրոց (9-10-րդ դասարաններ): Տարրական և միջին դպրոցներում կրթությունը պարտադիր է:

Ըստ կրթության, աղքատության և տնտեսական ակտիվության հետազոտության («ՓԻ Ի ԷՅ ԷՍ», 2002)՝ 7-16 տարիքային խմբի երեխաների 6%-ը, իսկ շատ աղքատների 7%-ը դպրոց չի հաճախում: Հետազոտությունը նաև պարզել է, որ երիտասարդների 43-48%-ը դպրոցն ավարտելուց հետո կրթությունը չի շարունակում՝ ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով: Հենց նրանք էլ ապագայում աշխատանք գտնելու դժվարություններ են ունենում և որպես դրա հետևանք՝ համալրում են աղքատների շարքը:

Լուրջ մտահոգության տեղիք է տալիս դպրոց հաճախող աշակերտների թվի նվազումը, ինչը շատ դեպքերում պայմանավորված է ընտանիքի սոցիալական ծանր կացությամբ: Օրինաչափություն է դարձել այն փաստը, որ բարձր դասարաններում սովորողների մեծ մասը աղջիկներ են, քանի որ ընտանիքին օգնելու նպատակով, ինչպես նաև մասնակի արտագաղթի պատճառով, դպրոցն ավելի հաճախ թողնում են տղաները:

Ինչպես պետական, այնպես էլ մասնավոր նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաները նույնպես փոքրաթիվ են, քանի որ չաշխատող ծնողների համար դա նյութապես մատչելի չէ, իսկ աշխատող ծնողների համար՝ նյութական հավելյալ ծանրաբեռնվածություն է:

1.2.2. Բարձրագույն կրթություն

Համալսարանների պատկառելի թիվը երիտասարդների համար չի նշանակում մեծ միջոցների և տեխնիկական հնարավորությունների առկայություն: Միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են մասամբ բավարարել ուսանողների կարիքները, մինչդեռ այդ խավի մի կարևոր հատվածի համար դա մնում է դժվարին հիմնախնդիր, որովհետև պետական կրթաթոշակի ներկա չափը նրանց հնարավորություն չի տալիս հոգալ նույնիսկ հիմնական ծախսերը:

2003-2004 ուսումնական տարում հանրապետությունում գործող պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ընդհանուր թիվը կազմել է 77944 մարդ: Այդ ուսումնական տարում հանրապետությունում գործել են 20 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն (բուհ), 10 մասնաճյուղ և 73 ոչ պետական բուհ:

2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը պետական քաղաքականության խնդիրների շարքում մատնանշում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում ուսուցման որակի ներքին (ներբուհական) ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը: Պետությունն ապահովում է նաև անցումը բարձրագույն կրթության որակավորման երկաստիճան համակարգին, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ստուգման և որակի գնահատման, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրումը: Օրենքը բարձրագույն ուսումնական հաստատության սովորողին իրավունք է տալիս նաև իր հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների ընտրել մասնագիտություն, բուհի տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել այլ բուհ, ներառյալ օտար պետություններում, թեև այս հարցում առկա են հոգեբանական-ավանդական որոշ խոչընդոտներ և սահմանափակումներ:

Ի տարբերություն կենտրոնացված պլանավորման համակարգի՝ շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի անցնելու համակարգերը մասնագիտական կրթական հաստատությունների շրջանավարտների համար «ապակենտրոնացված» են և մտնում են տվյալ հաստատության գործառույթների մեջ:

1.2.3. Ոչ ֆորմալ կրթություն¹

Ոչ ֆորմալ ուսուցման համակարգը նոր երևույթ է, այն հայաստանյան հասարակություն է մուտք գործել 90-ական թվականներին, բայց քանի որ այս ոլորտի բնորոշ գծերն են ճկունությունն ու բազմազանությունը, չկան հստակ չափորոշիչներ, որոնք կարելի է ընդօրինակել այլ երկրի փորձից և հարմարեցնել հայաստանյան իրականությանը: Այս ոլորտի զարգացման խնդիրներով զբաղվող հեղինակավոր կառույցների համապատասխան ուսումնասիրություններից պարզվում է, որ նույնիսկ որակի չափանիշների եւ ճանաչման խնդիրների մասին խոսելիս այս դաշտի մասնագետները զգուշանում են «ոչ ֆորմալ ուսուցման ֆորմալացումից»:

¹ Բոլոր այն կրթական ձեռնարկները (թրեյնինգ, սեմինար, ֆորում, միջմշակութային կապեր և այլն), որոնք իրականացվում են պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների կողմից և դուրս են ակադեմիական ծրագրից: Ոչ ֆորմալ ուսուցումը երիտասարդների մասնակցությունը, ակտիվությունը և սոցիալական ինտեգրացիան խթանող հիմնական մեթոդներից մեկն է: Նրա նպատակն է համապատասխան ունակությունների, հմտությունների և տեղեկատվության հաղորդումը, որն իրականացվում է բարձրագույն և հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս, վերը նշված մեթոդներով:

Հայկական երիտասարդական հասարակական կազմակերպությունների հիմնախնդիրներից մեկը «ոչ ֆորմալ ուսուցման» վերաբերյալ գիտելիքների պակասն է: Հայաստանի Հանրապետության երիտասարդության խնդիրներն անհնար է լուծել առանց ստեղծագործական մոտեցման, ճկունության և անձնական պատասխանատվության: Այս ունակությունները ակադեմիական ֆորմալ կրթական համակարգը (դպրոց, բուհ, մասնագիտական տեխնիկական ուսումնարան եւ այլն) բավարար չափով չի զարգացնում: Ոչ ֆորմալ ուսուցման համակարգում ստեղծագործական մոտեցումը, ճկունությունը և անձնական պատասխանատվությունը պարտադիր նախապայմաններ են, իսկ ուսուցողական համակարգի կառուցվածքը և արժեքային բազան կոչված են պատասխանելու արդեն նոր, տեղեկացված հասարակության մարտահրավերներին:

Ակնհայտ է, որ ոչ ֆորմալ ուսուցման ոլորտի զարգացումը պետք է լինի Հայաստանի ազգային երիտասարդական քաղաքականության զարգացման առաջնահերթություններից մեկը, և պետք է հաշվի առնել նաև, որ խոսելով այս դաշտի մասին՝ մենք ընդհանուր առմամբ խոսում ենք արդի հասարակության լուրջ եւ արմատական փոփոխություններին ի պատասխան առաջացած մի նոր երևույթի մասին, որը ներառում է ինչպես այս փոփոխության բոլոր մարտահրավերների արտացոլումը, այնպես էլ դրանք լուծելու ելակետերը:

1.3. Հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակություն

Վերջին տասնամյակի գործընթացները, որոնք ընդգրկում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, էապես փոխեցին մեր պատկերացումներն ավանդաբար ձևավորված արժեքների վերաբերյալ: Սակայն կան արժեքներ, որոնք անփոփոխ են՝ անկախ այն հանգամանքից, թե հասարակական ինչ կարգ է հաստատվում կամ բարեփոխումներն ինչ ընթացք են ստանում: Այդ արժեքներից են կրթությունը, ազգային և համամարդկային հոգևոր, մշակութային, ժողովրդավարական, հայրենասիրական դաստիարակությունը: Խորհրդային տարիներին քարոզվող կոմունիստական գաղափարախոսության մերժումից հետո անցում կատարվեց ազգային և ժողովրդավարական արժեքային համակարգին, որի տարածումը սակայն, կրթական և հասարակական մյուս ոլորտներում պայմանավորված է զգալի դժվարություններով: Դրանք բնորոշվում են մի շարք գործոններով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական և այլն: Սակայն անհերքելի է, որ հենց այդպիսի արժեքներ կրող քաղաքացու կերտումն է քաղաքացիական հասարակության կայացման հիմքն ու երաշխիքը:

Մարդու և քաղաքացու դաստիարակությունը սկսվում է ընտանիքից, հայրենի միջավայրից, զարգանում դպրոցում, բուհերում, զինված ուժերում, կուսակցական և հասարակական կազմակերպություններում և այլն: Իր ուրույն դերն ունի նաև Հայ առաքելական եկեղեցին՝ հոգևոր և հայրենասիրական դաստիարակության դարավոր փորձով: Հայրենասիրական դաստիարակության լավագույն դպրոց է նաև բանակը: Ազգային, համամարդկային արժեքների, մշակույթի և գաղափարախոսության քարոզչության տարածելու խնդրում մեծ նշանակություն է տրվում զանգվածային լրատվության միջոցների, հատկապես՝ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով տարվող քաղաքականության իրականացմանը:

1988 թվականի ազգային զարթոնքը նոր շունչ հաղորդեց երիտասարդության շրջանում

հայրենասիրական դաստիարակության և ազգային գաղափարների տարածման գործին: Երկրում սկիզբ առավ հարենասիրական ոգու նոր պոռթկում, որը Հայ առաքելական եկեղեցու գործունեության ընդլայնմանը զուգընթաց՝ անգնահատելի դեր կատարեց երիտասարդությանը ազգային գաղափարներով ու հայրենասիրությամբ ներշնչելու, նոր մտածելակերպ սերմանելու ճանապարհին:

Արդի փուլում ծառայել են նոր խնդիրներ, որոնք պահանջում են լուծման ոչ ավանդական եղանակներ: Այսօր առավել հրատապ է համագործակցության ու շփումների նոր ուղիների որոնումը, որոնք ներկա հազարամյակում հրամայական պահանջ են դարձել: Գլոբալիզացիայի պայմաններում առավել դժվարանում է պատանիներին ու երիտասարդներին ազգային և համամարդկային արժեքներին ծանոթացնելը: Արժեքային համակարգի ձևավորումը պետք է ընթանա ազգային և համամարդկային համադրմամբ: Հայաստանում միշտ առաջնահերթ կարևորություն են ունեցել հոգևոր մշակույթն ու արժեքները: Այս իմաստով կարևոր է պետության դերը՝ երիտասարդ սերնդին ազգային արժեքների մատուցմամբ, հայրենասիրական ոգով և դրանց զուգահեռ՝ ժողովրդավարական, համամարդկային սկզբունքներով կրթելը: Պետության կողմից այս ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետությունը ապահովելու համար պետք է տարվի համակարգված աշխատանք՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

Պետությունը երիտասարդության հոգևոր և ֆիզիկական զարգացումը դիտում է որպես ազգային զարգացման անհրաժեշտ մաս և հասարակական մեծ արժեք:

Մեծ Սփյուռք ունենալու պատճառով կարևորվում է սփյուռքահայ երիտասարդությանն ազգային արժեքներին հաղորդակից դարձնելը և հայաստանյան մշակույթը նրան ներկայացնելը: Այս առումով խրախուսվում է հատկապես պետության և հասարակական կազմակերպությունների ջանքերով սփյուռքահայ և հայաստանաբնակ երիտասարդների մասնակցությամբ տարաբնույթ միջոցառումների իրականացումը, ինչը կնպաստի մշակութային կապերի և համագործակցության ամրապնդմանը, հարազատ երկրի անցյալին ու նվաճումներին ծանոթանալուն:

1.4. Երիտասարդների առողջությունը (սեռական և վերարտադրողական առողջություն)

1.4.1. Անցանկալի վաղաժամ հղիություն

Ըստ Հայաստանի ազգային տարեկան վիճակագրական տեղեկագրի՝ գրանցված հղիության արհեստական ընդհատումների թիվը 1990 թվականի համեմատ նվազել է ավելի քան 2,4 անգամ (10.7 հազար 2003թ., 26.1 հազար 1990թ.): Պաշտոնական տվյալները վկայում են, որ բոլոր գրանցված արհեստական ընդհատումների 6%-ը 2003 թվականին կատարվել են 15-19 տարեկան դեռահասների և երիտասարդների շրջանում:

2003 թվականին «Կանանց, տղամարդկանց և երիտասարդների սեռական և վերարտադրողական առողջության բարելավում» ծրագրի շրջանակներում «Ընտանիքի և առողջության համար» հայկական ասոցիացիան սկսեց ներմուծել «Երիտասարդների համար նպաստավոր» մոտեցում գոյություն ունեցող վերարտադրողական առողջության ծառայությունների նկատմամբ՝ նպատակ ունենալով բարելավել սեռական և վերարտադրողական առողջության խնամքի որակը: Ընդհանուր առմամբ՝ առողջապահական

12 հիմնարկներ ընտրվեցին որպես փորձնական: Դրանցից ութն արդեն ունի որոշ ձեռքբերումներ, իսկ մյուս 4-ուն ծրագիրը նոր է ներդրվում:

1.4.2. ՄԻԱՎ/ՁԻԱՅ և սեռական ճանապարհով տարածվող վարակներ

Մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերը Հայաստանի Հանրապետությունում սկսել են արձանագրվել 1988 թվականից:

1988 թվականի հունվարի 1-ից մինչև 2005 թվականի հունվարի 1-ը հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ-ի 320 վարակակիր, որոնցից տղամարդ էն 235-ը (77,3%), իսկ կին՝ 69-ը (22,7%): ՄԻԱՎ-ի վարակակիրների մեծ մասը (76%) 20-39 տարիքային խմբում է, 16-30 տարեկանների շրջանում այն 40,1% է (102):

Սակայն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի այս վիճակագրությունը չի արտացոլում համաճարակի տարածվածության իրական պատկերը: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում տարածվածության իրական չափերն ավելի քան 10 անգամ գերազանցում են գրանցման տվյալները, այսինքն, հաշվարկային տվյալներով՝ Հայաստանում կա ՄԻԱՎ-ի մոտ 2800 - 3000 վարակակիր:

Հայաստանում ՄԻԱՎ-ի վարակը փոխանցվում է հիմնականում թմրամիջոցների ներերակային օգտագործման միջոցով (53,6%) և հետերոսեքսուալ հարաբերությունների ճանապարհով (37,8%):

Հատկանշական է, որ վերջին տարիներին նկատվում է թմրամիջոցների ներերակային օգտագործման ճանապարհով վարակման դեպքերի զգալի աճ: Այսպես, եթե մինչև 1999թ. արձանագրվել է հետերոսեքսուալ հարաբերությունների միջոցով վարակվելու 41 դեպք, թմրամիջոցների ներերակային օգտագործման ճանապարհով վարակվելու 22 դեպք, ապա 1999թ. մինչև 2005թ. ապրիլի 1-ը համապատասխանաբար՝ 74 և 141 դեպք:

Թմրամիջոցների ներերակային օգտագործման միջոցով բոլոր վարակվածները եղել են տղամարդիկ, ընդ որում՝ նրանց մի մասը ժամանակավոր բնակվել և հավանաբար ՄԻԱՎ-ով վարակվել է ՌԴ-ում, Ուկրաինայում և այլուր: Բացի դրանից, վարակակիր տղամարդկանց մեծամասնությունը (69,4%) նաև թմրամիջոցների ներերակային օգտագործող է, իսկ կանանց վարակման ուղին հիմնականում հետերոսեքսուալ հարաբերությունն է (91,3%):

1990-1996թթ. Հայաստանում գրանցվեց սեռավարակների աննախադեպ աճ: Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության՝ 2003թ. սիֆիլիսի գրանցված նոր դեպքերը տղամարդկանց շրջանում կազմում էր 4,1՝ 100000 տղամարդկանց հաշվով (10,2% - 1998թ.) և կանանց շրջանում 4,4՝ 100000 կանանց հաշվով (15,8՝ - 1998թ.): Չնայած գրանցվել է առաջին անգամ գոնոռեայով ախտորոշված տղամարդկանց թվի նվազում (43,6-ից 1997թ. մինչև 28,6 2003թ. 100000-ի հաշվով), առկա է կանանց շրջանում գրանցված դեպքերի աճ (12,7-ից 1997թ. մինչև 18,4 2003թ.): Սիֆիլիսի և գոնոռեայի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 18-39 տարիքային խմբում:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության տարեկան հաշվետվությունները ցույց են տալիս, որ 1990թ. գրանցվել է վերարտադրողական տարիքի կանանց շրջանում սիֆիլիսի նոր դեպքերի թվի զգալի աճ (8,0 100000 վերարտադրողական տարիքի կանանց հաշվով 2003թ., համեմատած 2,9-ի հետ 1990թ.): Վերարտադրողական տարիքի կանանց շրջանում գոնոռեայի գրանցված նոր դեպքերի

թիվը նույնպես աճել է և հասել 33,7-ի՝ 100000 վերարտադրողական տարիքի կանանց հաշվով 2003թ., համեմատած 24,9-ի հետ 1990թ.:

2000 թվականին անցկացված հետազոտության արդյունքների համաձայն՝ հետազոտությանը նախորդող 12 ամսվա ընթացքում և կանանց, և տղամարդկանց 1%-ից պակասն է գրանցվել որպես սեռավարակներ, ինչը խոսում է այն մասին, որ առկա է թերգրանցում՝ ամոթի կամ ենթադրվող դատապարտման պատճառով: Գլխավոր պատճառներից են նաև բուժօգնության դժվարամատչելիությունը, ինքնաբուժման միտումները, բնակչության անհրազեկությունը: Նույնն է փաստում 1997-1998թթ. կատարված վերարտադրողական առողջության ուսումնասիրությունը: Այս դիտարկումներն ապացուցում են, որ սեռավարակների վերաբերյալ առկա պաշտոնական տվյալները վստահելի չեն, քանի որ շատ դեպքեր մնում են չախտորոշված կամ չեն գրանցվում:

2002 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման հանրապետական ծրագիրը 2002-2006թթ. համար, որն այժմ ընթացքի մեջ է: Այս ծրագիրը հատուկ ուշադրություն է հատկացնում երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանը: Սկսած 2003 թվականից՝ կրթության և գիտության նախարարությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ մշակում է ազգային ռազմավարության և գործողությունների ծրագիր՝ դպրոցական ուսումնական ծրագրում «Առողջ ապրելակերպ» առարկան ներմուծելու համար:

1.4.3. Հոգեկան առողջություն

Դեռահասությունը կյանքի այն շրջանն է, երբ վարքագծային շեղումները, մասնավորապես ալկոհոլի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործումը հաճախադեպ երևույթներ են: Եթե այս շեղումները ժամանակին չեն ախտորոշվում և չեն բուժվում, հանգեցնում են բռնությունների, հանցագործությունների, հոգեկան խանգարումների և հետաճի:

Երիտասարդների շրջանում ծխելը գրեթե սովորույթ է: Ըստ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության՝ Հայաստանում ծխողները մեծահասակների մոտավորապես 30%-ն են, որոնց գրեթե 60%-ը տղամարդիկ են: Երիտասարդների և կանանց շրջանում ծխողների թվի մասին իրատեսական ցուցանիշներ չկան, որովհետև մեծամասնությունը թաքցնում է այն՝ ազգային սովորույթների և բարոյական նորմերի պատճառով:

Վերջին տասնամյակում Հայաստանում նկատվում է ալկոհոլի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման աճի միտում, հատկապես երիտասարդության շրջանում: 2003թ. պաշտոնապես գրանցվել են ալկոհոլիզմի և ալկոհոլիկ փսիխոզի առաջին անգամ ախտորոշման 212 դեպք (6.6 100000 բնակչության հաշվով) և թմրամոլության առաջին անգամ ախտորոշման 16 դեպք (0,5 100000 բնակչության հաշվով): Այնուամենայնիվ, պաշտոնական տվյալները չեն արտացոլում թմրամոլության իրական պատկերը, որովհետև ոչ պաշտոնական ցուցանիշները պաշտոնական տվյալները գերազանցում են մոտ 10 անգամ:

Ըստ իրավախախտումների պաշտոնական վիճակագրության՝ 2003թ. գրանցված բոլոր հանցագործությունների 45%-ը կատարվել է 30 տարեկանից ցածր երիտասարդների, հիմնականում տղամարդկանց կողմից՝ թմրամիջոցների օգտագործման հետևանքով: Թմրամոլների համարյա 65%-ը օգտագործում է հաշիշ (մարիխուանա) և 35%-ը՝ օփիում:

ՀՀ առողջապահության նախարարության 2004թ. դիտարկումները ահազանգում են, որ այժմ կանոնավոր ծխում են ավագ դասարանների տղաների 11,1%-ը, իսկ աղջիկների 1,2 %-ը: Դեպքից դեպք ծխում են տղաների 41,6%-ը, աղջիկների՝ 11,2 %-ը:

1.4.4. Թմրամիջոցների օգտագործումը

Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցներ օգտագործողներին վերաբերող տվյալներն անբավարար են: Հանրապետության ոստիկանության բաժիններում հաշվառված է 3500-4000 թմրամուլ: Սակայն, ըստ ոստիկանության օպերատիվ տվյալների, հանրապետությունում կա մոտ 20 հազար թմրամուլ, որոնցից գրեթե 2000-ը թմրամիջոցն օգտագործում է ներերակային ճանապարհով: Թմրամիջոց օգտագործողները հիմնականում 19-30 տարեկան երիտասարդներ են (56%): Առաջին անգամ թմրամիջոց օգտագործողների միջին տարիքը, ըստ հարցման տվյալների, 24 է: Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության նարկոլոգիական կենտրոնի տվյալներով՝ 2004թ. օգոստոսի դրությամբ հանրապետությունում գրանցված է 215 թմրամուլ, որոնցից 37-ը՝ ներերակային թմրամուլ:

2002թ. անցկացված ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի նկատմամբ երկրորդ սերնդի համաճարակաբանական հսկման տվյալներով՝ թմրամիջոցների ներերակային օգտագործողների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը 15%-ի սահմաններում է: Այս խնդրի կարգավորմանն է միտված 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված և 2003թ. փետրվարի 10-ից գործող «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Նշենք, որ վերականգնողական կենտրոնների բացակայությունը նվազեցնում է թմրամուլության բուժման արդյունավետությունը:

1.4.5. Առողջության պահպանման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը

Խորհրդային ժամանակաշրջանում դեռահասների առողջապահական կրթությունը, հատկապես սեռական դաստիարակությունն անտեսվել է: Անկախության տարիներին Հայաստանում կատարվել են ապրելակերպի արմատական փոփոխություններ, ներքին ու արտաքին մեծ արտագաղթ, և հասարակությունը ենթարկվել է օտար մշակույթների ազդեցությանը: Ավանդական աջակցության միջոցները, ծնողները, ընտանիքի ու համայնքի մյուս չափահասները այս արագ փոփոխվող միջավայրում չեն կարող օգնել երիտասարդներին: Ավելին, առողջապահության, կրթության, սոցիալական և այլ ոլորտների մասնագետները, որոնց երիտասարդները կարող են դիմել, սեռական և վերարտադրողական առողջության հարցերի կամ երիտասարդների խորհրդատվության վերաբերյալ ուսուցում չեն ստացել: Դեռահասների տեղեկատվության հիմնական աղբյուրը ընկերները և մամուլն են: Նրանց սեռական հարցերը մնում են «տաբու» Հայաստանի ավանդական, սակայն արագ փոխվող հասարակության մեջ: Առողջ ապրելակերպը և սեռական դաստիարակությունը դեռևս ներառված չեն դպրոցական ծրագրում: Չնայած հանրությունն ընդունում է, որ դպրոցներում սեռական գիտելիքների չբավարարված պահանջ կա՝ պետական կրթական համակարգում առաջընթացը շատ փոքր է:

1.4.6. Առողջության պահպանման ծառայությունների մատչելիությունը

Անցումային շրջանի սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները, պետության կողմից ֆինանսավորվող առողջապահության բացակայությունը, բացասական ազդեցություն են թողել ամբողջ համակարգի վրա: Երեխաների առողջության վրա ազդում են նաև շատ դպրոցների սանիտարական շեղումները՝ ջրի անբավարար մատակարարումը, զուգարանների սանիտարական անբավարար վիճակը,

ձնռանը շատ դասարաններում պահպանվող ցածր ջերմաստիճանը, պասիվ ծխելու տարածվածությունը, ֆիզիկական ակտիվության դրսևորման համար անհրաժեշտ մարզադաշտերի, մարզադահլիճների, ինչպես նաև բակային տարածքների պակասը: Վերջին տասնամյակում այցելությունները հիվանդանոց և հիվանդանոցների զբաղվածության ցուցանիշները կտրուկ նվազել են՝ հիմնականում ֆինանսական սահմանափակումների պատճառով: 2003թ. այցելությունների միջին քանակը առողջապահական հիմնարկներ, որոնք տրամադրում են ամբուլատոր և դիսպանսեր բուժօգնություն, նվազել է մինչև 120 հաճախորդի մեկ հերթափոխի ընթացքում՝ 10 000 բնակչի հաշվով:

Այս ընթացքում համաճարակաբանական լայնածավալ հետազոտություններ չեն իրականացվել: Սակայն առկա տվյալները ցույց են տալիս, որ դեռահասների շրջանում բավականաչափ տարածված են ոչ տարանցիկ հիվանդությունները: Այսպես՝ ասթմայի և նախասսթմային վիճակների տարածվածությունը վաղ դեռահասության տարիքում կազմում է 13%: Ընդհանուր առմամբ՝ ալերգիկ հիվանդություններ գրանցվել են շուրջ 20% միջին և ավագ դպրոցահասակ տարիքի երեխաների շրջանում: Սկրինինգային հետազոտությունների տվյալներով առողջական խնդիրներ (աղեստամոքսային, նյարդաբանական, օրթոպեդիկ, ատամների, քթի, ականջի, կոկորդի, միզուղիների) ունենում են երեխաների մինչև 60%-ը, որոնց մեծ մասը դեռահասներն են: Կարելի է եզրակացնել, որ դեռահասների առողջական ընդհանուր վիճակն անբավարար է: Դա մի քանի բացասական գործոնների ազդեցության հետևանք է.

- շրջակա միջավայրի ազդակները,
- առողջ ապրելակերպի պակասը,
- դեռահասների և երիտասարդների առողջական խնդիրների նկատմամբ բուժաշխատողների ուշադրության և գիտելիքների պակասը,
- տարիքային տվյալ խմբի նկատմամբ առողջապահական համապարփակ քաղաքականության թերացումները:

Այս իրավիճակը զգալի ազդեցություն է թողնում մարդկանց առողջության վրա՝ հանգեցնելով հիվանդացության և մահացության ցուցանիշների աճին: Ըստ ուսումնասիրության՝ հայերը չեն օգտվում բժշկական ծառայություններից քանի դեռ կարելի է դիմանալ: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից 1998թ. իրականացված Կովկասի առողջապահական ուսումնասիրությունը ևս վկայում է, որ խոցելի խմբերին վերաբերող առողջական ցուցանիշները վատանում են:

Երևանում և Արարատի մարզում 2001-2002թթ. «Յու Էն Էֆ Փի Էյ» աջակցությամբ իրականացված հետազոտության արդյունքներով երիտասարդների համար սեռական և վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունների մատչելիությունը շատ սահմանափակ է: Ուսումնասիրության ընթացքում հարցված երիտասարդների մեծամասնությունը (80%) երբեք չի դիմել խորհրդատվական կամ առողջապահական ծառայությունների: Դրանք անմատչելի են հատկապես այն երիտասարդների համար, ովքեր եկամուտ չեն վաստակում, օրինակ՝ ուսանողները, մանկատների շրջանավարտները, փողոցի դեռահասները, գործազուրկ երիտասարդները:

Մոր և մանկան առողջության խնամքի և ընտանիքի պլանավորման, հղիության ընդհանուր ծառայությունները ավանդաբար նախատեսված են եղել ամուսնացած կանանց երեխաների խնամքի համար: Մշակութային ավանդույթների պատճառով ծառայությունները սահմանափակ են երիտասարդների համար, հատկապես, եթե նրանք ամուսնացած չեն և երբեմն նույնիսկ ամուսնացած անչափահասների համար՝ մինչև նրանց առաջին անգամ հղիանալը: Ավելին, ծառայություններ տրամադրողներից քչերն ունեն հատուկ ուսուցում կամ բավարար փորձ՝ դեռահաս աղջիկների և տղաների սեռական ու վերարտադրողական

առողջության կարիքները բավարարելու համար, հետևաբար, բավարար չափով պատրաստ չեն սպասարկելու այս խմբին:

Երիտասարդներն ունեն սահմանափակ հնարավորություն ընտանիքի պլանավորման և սեռավարակների, ներառյալ ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի, վերաբերյալ խորհրդատվություն տրամադրող հիմնարկներից օգտվելու համար՝ հիմնականում անչափահասների սեռական բնութագրի հետ կապված մշակութային խարազանման (ստիգմա) պատճառով:

Հակաբեղմնավորիչ միջոցները, ներառյալ պահպանակները, կարող են ձեռք բերվել դեղատներում, բայց շատերի և հատկապես դեռահասների համար դրանց գինը շատ բարձր է: Այս պայմաններում սեռականորեն ակտիվ երիտասարդները ենթակա են անցանկալի հղիության, աբորտի, սեռավարակների/ՄԻԱՎ ռիսկերի և դրանց հետ կապված սոցիալական և առողջապահական տհաճ հետևանքների: Ըստ առողջապահության նախարարության հաշվետվությունների՝ վերջին տարիներին անչափահասների շրջանում հղիությունների և սեռավարակների թիվը զգալիորեն ավելացել է:

Իրավական դաշտում խոշոր ձեռքբերում էր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ 2002թ. դեկտեմբերին ընդունած օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»: Այս օրենքը ներառում է միջազգայնորեն ճանաչված սեռական և վերարտադրողական իրավունքները, որոնք սահմանվել են Պլանավորվող ծնողավարման միջազգային ֆեդերացիայի մարդու իրավունքների սահմանումներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով դեռահասների իրավունքներին:

1.5. Քաղաքացիական ակտիվություն

Երիտասարդությունը պետք է լիարժեքորեն իմանա հասարակության անդամի իրավունքներն ու պարտականությունները: Իրենց զգալով միասնական համայնքի անդամ՝ երիտասարդները կարող են ունենալ սոցիալական ինքնաիրացման ավելի մեծ հնարավորություններ:

Սույն ռազմավարության գնահատման կարևորագույն ցուցանիշներից է «երիտասարդության մասնակցության ակտիվության» աստիճանը:

Երիտասարդության մասնակցությունն ընդգրկում է չորս բաղադրիչ.

- ա) տնտեսական (վերաբերում է աշխատանքին և ձեռներեցությանը),
- բ) քաղաքական (վերաբերում է որոշումների ընդունման բոլոր գործընթացներին և երիտասարդների մասնակցությանը իշխանության բաշխմանը)
- գ) հասարակական (վերաբերում է հասարակական և համայնքային կյանքին, երիտասարդների մասնակցությանը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և այլն)
- դ) մշակութային (վերաբերում է մշակույթի ոլորտում երիտասարդների ինքնադրսևորմանը և ստեղծագործական ինքնարտահայտմանը):

Ակնհայտ է, որ Հայաստանում (ինչպես բոլոր անցումային հասարակություններում) այս չորս ոլորտները բավարար չափով զարգացած չեն: Մինչդեռ «երիտասարդական մասնակցությունը» զարգացման ռազմավարություն է և կարող է դիտվել որպես մի գործընթաց, որի միջոցով որևէ դաշտի շահառուներն ազդում են զարգացման ծրագրերի և ռեսուրսների վրա և (կամ) կառավարում դրանք:

Ընտրական տարիքի բնակչության մեջ Հայաստանի Հանրապետության երիտասարդությունն աչքի է ընկնում քաղաքական պասիվ վարքագծով, ինչի հետևանքով, չնայած ակտիվ բնակչության ամենամեծ տարիքային խումբն է, քիչ է ընդգրկված քաղաքական կուսակցություններում, ինչպես նաև՝ հաճախ միայն ընտրությունների ժամանակ է զգացվում երիտասարդների ակտիվ մասնակցությունը: Կարևոր է հատկապես երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին:

1990-ականների վերջերից բավականին աշխուժացել է երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական պետության կայացման գործում:

Թեև առկա են Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդական հարցերի խորհրդում երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվածություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության դրական փորձը, առայսօր երիտասարդական հասարակական կազմակերպությունները բավարար չափով ներգրավված չեն երիտասարդական քաղաքականության իրականացման գործում: Սա բացատրվում է մի քանի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով, որոնցից կարելի է առանձնացնել երիտասարդության ներգրավվածության ցածր մակարդակը, կամավորական շարժման տարածման ցածր մակարդակը, ֆինանսավորման դժվարությունները և այլն: Այս խնդիրները հատկապես սուր են մարզաբնակ երիտասարդության շրջանում:

Մշակութային և մարզական հաստատությունների անբավարար վիճակը, հատկապես գյուղական շրջաններում, բացասական հետք է թողել երիտասարդների ինքնահաստատման հնարավորությունների վրա: Գյուղաբնակ երիտասարդությունը սահմանափակ հնարավորություններ ունի ազատ ժամանցը մշակութային և մարզական միջոցառումներով հագեցնելու, ինչպես նաև մշակույթի և արհեստների ազգային, ավանդական տեսակները զարգացնելու համար:

Այսպիսով՝ ոլորտում համապատասխան մեխանիզմների և մասնակցության սխեմաների մշակումը պետք է լինի երիտասարդական հասարակական կազմակերպությունների, պետության և միջազգային կառույցների առաջնայնություններից մեկը: Բոլոր հեղինակավոր միջազգային կառույցները ևս, որոնց անդամակցում է մեր երկիրը՝ երիտասարդությանը վերաբերող բոլոր բանաձևերում եւ հռչակագրերում այս կամ այն կերպ շեշտում են երիտասարդության մասնակցության խնդրի կարևորությունը: Ընդ որում, մեր պետությունը մասնակցել է այս փաստաթղթերից մեծ մասի ընդունմանը, այսպիսով պարտավորվելով Հայաստանում զարգացնել այս ոլորտը:

1.5.1. Քաղաքական մասնակցություն

Քաղաքական մասնակցությունը իրենց վերաբերող որոշումների կայացման բոլոր գործընթացներին և բոլոր մակարդակներում երիտասարդների մասնակցությունն է իշխանության բաշխմանը:

Այս բնագավառում առաջին քայլերն արվեցին դեռ 1997-98թթ., երբ սահմանվեց երիտասարդության հարցերի փոխնախարարի պաշտոն և պետական բյուջեի առանձին տողով դրամական միջոցներ հատկացվեցին երիտասարդական ոլորտին:

Հայաստանի Հանրապետության «Երիտասարդական քաղաքականության հայեցակարգում», որպես հիմնական սկզբունքներից, հատուկ շեշտված է՝ «Երիտասարդ քաղաքացիների անմիջական մասնակցության ապահովում երիտասարդությանը և ողջ հասարակությանը վերաբերող քաղաքականության և առանձին ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին»:

Քաղաքացիական հասարակություն և ազգային երիտասարդական քաղաքականություն ստեղծող երկրների հիմնախնդիրներից է հանրային վերահսկողության և թափանցիկության պակասը:

Երիտասարդական արդյունավետ ազգային քաղաքականության մշակման, իրականացման և զարգացման առաջնային խնդիրներից են պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և հենց իրենց՝ երիտասարդական հասարակական կազմակերպությունների ամբողջ գործունեության և դրա արդյունավետության շարունակական գնահատումը - դիտարկումը, հարցումների, ուսումնասիրությունների անցկացումը և զանգվածային լրատվության միջոցներով համապատասխան լուսաբանման կազմակերպումը:

Ինչպես փաստում է Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների ցանցի՝ երիտասարդական և ուսանողական կազմակերպությունների դաշտում կատարած ուսումնասիրությունը, Հայաստանի Հանրապետության երիտասարդական դաշտում պետական և հասարակական հատվածների միջև առկա է փոխադարձ վստահության պակաս: Այն հարցին, թե որ կառույցները կամ ինստիտուտներն են վստահում հասարակական կազմակերպություններին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության ԱԺ-ն գրավել են ամենացածր տեղերը (համապատասխանաբար՝ 6,9% և 10,3%): Վիճակն ավելի բարվոք է երիտասարդական կազմակերպությունների շրջանում. նրանց 44,8%-ը իրար վստահում է: Ըստ հարցվածների 41,4%-ի կարծիքի՝ միջազգային կառույցները վստահում են հասարակական կազմակերպություններին, 69%-ը համարում է, որ երիտասարդները վստահում են հասարակական կազմակերպություններին, 44,8%-ը համարում է, որ հասարակական կազմակերպությունները վայելում են հասարակության վստահությունը: Քաղաքական կուսակցությունները Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հետ գտնվում են սանդղակի վերջում՝ 17,2%:

Պետական մարմինները պետք է ուշադրության արժանացնեն նշված տվյալները, քանի որ փոխադարձ անվստահության և կասկածի այսօրինակ մթնոլորտում պետության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը և գործընկերությունը գրեթե անհնար են: Մինչդեռ պետության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը պարտադիր պայման է երկու ինստիտուտների համար էլ, քանի որ այն երիտասարդներին հնարավորություն է տալիս ներգրավվել որոշումների ընդունման և քաղաքականության ձևավորման ու իրականացման գործընթացում, ներդնել իրենց թարմ և նորարարական ներուժը: Սրա շնորհիվ մեծանում են նաև պետության նկատմամբ հասարակության վստահությունը, պետական քաղաքականության հասարակական աջակցությունը և պետությունը չի համարվում հասարակությունից անջատ գործող, օտարված ինստիտուտ:

Գալով երիտասարդական քաղաքականության գործընթացներին հասարակական կազմակերպությունների մասնակցությանը՝ նշենք, որ հարցվող հասարակական կազմակերպությունների ընդամենը 13,8%-ն է երբևէ մասնակցել Հայաստանի Հանրապետության երիտասարդական

քաղաքականության մշակման աշխատանքներին: Նրանց 20%-ը մասնակցել է հասարակական կազմակերպությունների մասին օրենքի քննարկմանը, իսկ 17,2%-ը՝ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի քննարկումներին: Ուսումնասիրված հասարակական կազմակերպությունների ընդամենը 3,4%-ն է մասնակցել պետական բյուջեի քննարկմանը, իսկ 6,9%-ը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդական հարցերի խորհրդի աշխատանքներին: Ընդհանուր առմամբ, հարցված հասարակական կազմակերպությունների ընդամենը 27,6%-ն է երբևէ զբաղվել լոբբինգով: Նման վիճակը զգալիորեն դժվարացնում է հանրության հետ պետական ինստիտուտների երկխոսությունը: Այս խնդիրը կարևոր է երկուստեք, քանի որ հակառակ դեպքում թուլանում են նաև հասարակական կազմակերպությունների դիրքերը, և նրանք այլևս չեն դիտվում՝ որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցությունն ապահովելու կամուրջ և միջոց:

1.5.2. Հասարակական մասնակցություն

Խոսքը վերաբերում է երիտասարդների մասնակցությանը հասարակական և համայնքային կյանքին, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը:

Խորհրդային Միության փլուզումից հետո երիտասարդության հոգևոր-բարոյական դաստիարակության ոլորտում զգալի բաց առաջացավ: Դրա անմիջական պատճառը մինչ այդ Խորհրդային Միությունում գոյություն ունեցած բարոյական դաստիարակության պետական համակարգի մերժումն էր, որը հիմնված էր արդեն կայացած կառույցների վրա՝ «հոկտեմբերիկություն», «պիոներություն», «կոմերիտականություն»: Բարոյական դաստիարակության այդ համակարգի մերժման հետևանքով հաջորդ տասնամյակում անհնարին դարձավ երիտասարդության հոգևոր-գաղափարական կյանքի և ընկալումների վերահսկումը: Դա կարելի է բացատրել գաղափարախոսական որևէ համակարգի բացակայությամբ: Ուստի պատահական չէր, որ հոգևոր քաղց ապրող երիտասարդությունը մեծ մասամբ մերժեց արժեքային ծանոթ համակարգը և որպես դրա հետևանք՝ համալրեց զանազան աղանդների շարքերը: Իրավիճակն ավելի ծանրացավ սոցիալ-տնտեսական խնդիրների ճնշման տակ: Դժվարացավ երիտասարդության փոխշփումը, մարզաբնակ երիտասարդությունը հայտնվեց մշակութային, տեղեկատվական շրջափակման մեջ:

Անցումային շրջանի բոլոր հասարակությունների նման՝ Հայաստանում ևս հասարակական առանձին խմբերի, շերտերի ձևավորման բուռն կամ տարտամ գործընթացը հիմնականում ինքնակարգավորվող բնույթ ունի: Նման պայմաններում երիտասարդությունը, իր առանձնահատուկ կարիքներով ու հիմնախնդիրներով, գրեթե դուրս է մնացել թե՛ պետական և թե՛ հասարակական հոգածությունից:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գրանցված է մոտ 3000 հասարակական կազմակերպություն: Նրանց մոտավորապես 50%-ը կամ երիտասարդական է, կամ զբաղվում է երիտասարդության խնդիրներով: Սակայն գրանցված հասարակական կազմակերպությունների մեծ թիվը չի նշանակում, թե բոլորն են աշխատում:

Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների ցանցի իրականացրած՝ երիտասարդական կազմակերպությունների դաշտի ուսումնասիրությունը տվել է երիտասարդական հասարակական կազմակերպությունների հատվածի հետևյալ պատկերը. երիտասարդական հասարակական կազմակերպությունների ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց միջին տարիքը 35 է: Կազմակերպություններում հիմնականում չկա անդամության տարիքային սահմանափակում (78,6 %), իսկ

ղեկավար մարմինների համար տարիքային սահմանափակում ունի հարցված հասարակական կազմակերպությունների ընդամենը 10,7 %-ը:

Երկրի համար ծանր ժամանակաշրջանում (1992-95թթ.) ստեղծվեցին ուսանողական առաջին խորհուրդները, որոնք ունեին մի քանի հանգուցային կանոնադրական նպատակներ և աշխատանքային ուղղություններ.

- ա) ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանություն,
- բ) մասնակցություն ուսումնական գործընթացի կազմակերպմանը,
- գ) ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, բարոյական և ստեղծագործական զարգացում,
- դ) ուսանողների ազատ ժամանցի, սոցիալական խնդիրների լուծում,
- ե) միջբուհական և միջազգային համագործակցություն:

1.5.3. Մշակութային մասնակցություն

Երիտասարդության մասնակցության այս ձևը վերաբերում է մշակույթի ոլորտում երիտասարդների ինքնադրսևորմանը և ստեղծագործական ինքնարտահայտմանը: Այն նվազ ուսումնասիրվածն է: Մակերեսային մշակույթի լայն տարածման պայմաններում երիտասարդության շրջանում նվազել են բարձրարժեք մշակույթի իմացությունը և հարգանքը դրա նկատմամբ: Փակվում են մշակութային օջախները, հանրային գրադարանները: Ետխորհրդային շրջանում գրեթե վերացան մշակութային ինքնարտահայտման, արվեստին ծանոթանալու և ազատ ժամանցի կազմակերպման վայրերը՝ մշակույթի և երիտասարդական պալատներն ու տները: Խորհրդային Միության ամենաընթերցող հանրապետություններից մեկի համարում ունեցած Հայաստանում այսօր երիտասարդության շատ քիչ տոկոսն է կարողում նույնիսկ դպրոցական ծրագրերով նախատեսված գրականությունը:

Հայաստանում միշտ առաջնահերթ կարևորություն են ունեցել հոգևոր մշակույթի և արժեքների խնդիրները: Այսօր էլ երիտասարդների մշակութային մասնակցության և մշակութային գրագիտության մասին խոսելիս դժվար է թերագնահատել Հայ առաքելական եկեղեցու և նրա արժեքների դերը երիտասարդների հոգևոր ու մշակութային կրթության և դաստիարակության գործում:

Կարևոր խնդիր է նաև երիտասարդության համար և երիտասարդության մասին տեղեկատվության մատուցման մատչելիության ապահովումը: Երիտասարդությանը հասու տեղեկատվական միջոցները (թերթեր, ռադիո, հեռուստատեսություն, ինտերնետ) սահմանափակ հնարավորություններ են ընձեռում երիտասարդներին: Տեղեկատվության մատչելիության պակասը սահմանափակում է երիտասարդների՝ կյանքի հմտություններին տիրապետելու հնարավորությունները: Այս հիմնախնդիրը առավել այժմեական է գյուղական բնակավայրերում, ուր զանգվածային հեռահաղորդակցության միջոցները կարող են արդյունավետ միջոց դառնալ երիտասարդության և իշխանությունների միջև շահեկան երկխոսություն ծավալելու համար:

Միջմշակութային ուսուցման և երկխոսության պետական քաղաքականությունը ևս օրախնդիրների շարքում է: Այդ գործընթացի կարևորագույն տարրերից մեկը պետք է լինի ժամանակակից տեղեկատվական

և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման, միջազգային համապատասխան ձեռնարկների կազմակերպման միջոցով Հայաստանի մշակույթը այլ երկրների երիտասարդությանը ներկայացնելը:

Մեծ Սփյուռք ունենալու պատճառով առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության երիտասարդությանը սփյուռքահայ մշակույթը ներկայացնելը, ինչպես նաև սփյուռքահայ երիտասարդությանը հայաստանյան մշակույթը ներկայացնելը: Վերջերս պետությունը միջմշակութային երկխոսության ոլորտում սփյուռքահայ և հայաստանաբնակ երիտասարդների մասնակցությամբ իրականացնում է մի շարք միջոցառումներ:

Արժեքների և գաղափարների քարոզչության նպատակով կարևորվում է նաև ՁԼՄ-ների, հատկապես հեռուստատեսության և ռադիոյի դերը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության սկզբունքները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը երիտասարդության հիմնահարցերի լուծումը համարում է իր քաղաքականության գերակայություններից մեկը: Երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունները բխում են երիտասարդների իրական կարիքներից, հիմնախնդիրներից և շահերից: Երիտասարդներին պետք է ընձեռել լիիրավ և աշխույժ դերակատարություն և կենսական խնդիրների վերաբերյալ ազատորեն կարծիքներ արտահայտելու հնարավորություն: Կառավարման մարմիններում նրանց ձայնը պետք է լսելի լինի ուղղակիորեն կամ ներկայացուցչական մարմնի միջոցով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջիկա տարիներին կիրականացնի երիտասարդական պետական քաղաքականությունը՝

- ա) ամրապնդելով սոցիալական գործընկերությունը քաղաքական, հասարակական և երիտասարդական կազմակերպությունների հետ,
- բ) խորացնելով միջգերատեսչական համագործակցությունը երիտասարդության հարցերի գծով,
- գ) զարգացնելով եվրոպական և միջազգային համագործակցությունը երիտասարդական քաղաքականության և դրան առնչվող ոլորտներում,
- դ) ստեղծելով միջազգային չափանիշների վրա հիմնված օրենսդրական դաշտ,
- ե) երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը պահելով դինամիկ վիճակում և արձագանքելով փոփոխվող միջավայրին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին», «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության եվրոպական համաձայնագրին», «Երեխայի իրավունքների մասին համաձայնագրին» և միջազգային մյուս փաստաթղթերին համապատասխան՝

երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը և երիտասարդության քաղաքականության ոլորտում կառավարության գործողությունները պետք է հիմնվեն հետևյալ սկզբունքների վրա՝

ա) Երաշխավորել խտրականության բացառումը. յուրաքանչյուր երիտասարդ ունի հավասար իրավունքներ՝ անկախ ռասայից, սեռից, դավանանքից, էթնիկական և սոցիալական ծագումից, քաղաքական և այլ հայացքներից, ընտանեկան դրությունից, ապրելու վայրից կամ այլ հանգամանքներից:

բ) Խրախուսել մասնակցությունը հասարակական կյանքին. Երիտասարդներին պետք է հետևողականորեն խրախուսել և աջակցել, որպեսզի նրանք իրացնեն հասարակական կյանքին լիիրավ մասնակցելու իրենց իրավունքը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Գործողությունների գերակայությունները

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության իրագործման համար անհրաժեշտ են համակարգված գործողություններ: Ակնկալվում է, որ «Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարությունը» կդառնա ճկուն և շարժունակ մի փաստաթուղթ, որը կուղղորդի կառավարության գործողությունները՝ լուծելու երիտասարդության մտահոգության աղբյուր համարվող շատ խնդիրներ՝ նրա կրթության, առողջության, հոգևոր-մշակութային զարգացման, իրավական և սոցիալական պաշտպանվածության, զբաղվածության վերաբերյալ:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը պետք է սերտաճի կառավարության ռազմավարական մյուս ծրագրերին (Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային ծրագիր և այլն): Մինևույն ժամանակ այն սահմանում է 2006-2007 թվականների Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների գերակայությունները երիտասարդական պետական քաղաքականության ոլորտում, այն է՝

ա) խթանել հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը,

բ) մեծացնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունները,

գ) խթանել առողջ ապրելակերպը,

դ) բարձրացնել երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակը և երիտասարդության շրջանում խթանել հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը:

Գերակայություն 1. Խթանել հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցությունը

Երիտասարդները բավարար չափով ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացներում: Սակայն դա չի նշանակում, թե նրանք հետաքրքրված չեն իրենց վերաբերող հարցերով: Դա նաև չի

նշանակում, թե երիտասարդները պատրաստ չեն գտնելու խնդիրների լուծումները: Որոշումների ընդունման գործընթացում երիտասարդների անբավարար ներգրավվածությունը հանգեցնում է նրանց՝ թերի իրազեկվածությանը: Նրանք որոշակիորեն անմասն են մնում հասարակական-քաղաքական կյանքից, որոշումների ընդունման գործընթացից: Երիտասարդները պետք է եռանդուն մասնակցեն հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին: Պետությունը և հասարակությունը պետք է ապահովեն անհրաժեշտ լծակներ, որպեսզի այդ մասնակցությունը լինի արդյունավետ: Իրենց իրավունքները իրացնելու և պարտականությունները կատարելու համար երիտասարդներին պետք է մատչելի լինեն բավարար եկամուտները, իրենց կյանքի վրա ազդող որոշումների կայացմանը մասնակցությունը, տեղեկատվությունը, աշխատանքի շուկան, բնակարանային անհրաժեշտ պայմանները, առողջապահությունը, կրթությունը, չաղտոտված շրջակա միջավայրը, տեղաշարժման ազատությունը և ազատ ժամանցի կազմակերպման դյուրինությունը: Բոլոր գործողությունների սկզբունքը պետք է լինի երիտասարդների մասնակցության ապահովումը: Տարբեր ոլորտներում իրենց կյանքի վրա ազդող նշանակալի և իրական մասնակցությունը կհանգեցնի նրան, որ հիմնախնդիրների լուծումները և երիտասարդների մոտեցումները կհամապատասխանեն իրականության պահանջներին:

Սպասվող արդյունքներ

- 1.1. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները կապահովեն երիտասարդների մասնակցությունը քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին:
- 1.2. Երիտասարդներին մատչելի կլինեն ազատ ժամանցի կազմակերպման, տեղեկատվության, հմտությունների և կարողությունների ձեռքբերման ավելի մեծ հնարավորություններ:
- 1.3. Կգիտակցվի կամավորականության՝ որպես մասնակցության, ոչ ֆորմալ կրթության և սոցիալական սերտաճման ձևերից մեկի արժեքը:

Գործողություններ՝

Տես՝ հավելված 2:

Ցուցանիշներ

- 1.1.
 - ա) 2007թ. վերջին երիտասարդությանն առնչվող խնդիրները և մասնակցության մեխանիզմները ընդգրկված կլինեն պետական ծրագրերում (կրթական, սոցիալական, առողջապահական և այլն):
 - բ) 2007թ. վերջին համայնքային և տարածաշրջանային կյանքին երիտասարդների մասնակցության եվրոպական խարտիայում ամրագրված դրույթները 50%-ով իրագործված կլինեն Երևանում և բոլոր մարզերում:
 - գ) ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը տարեկան առնվազն մեկ անգամ կիրականացնի երիտասարդական քաղաքականության դիտարկում՝ երիտասարդների ու երիտասարդական հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

- 1.2.
 - ա) 2006թ. վերջին երիտասարդական կենտրոններ հիմնադրված կլինեն բոլոր մարզերում, որոնք կտրամադրեն երիտասարդության մասին տեղեկատվություն և կմտուցեն ոչ ֆորմալ կրթություն, իսկ

2007թ. վերջին՝ մշակութային, մարզական, առողջապահական, երեխաների խնամքի, ինտերնետից օգտվելու հնարավորություններ:

- բ) 2007թ. վերջին՝ «Ուսուցում ուսուցանողների համար» դասընթացներին մասնակցելուց հետո 100 երիտասարդ կազմակերպած կլինի դասընթացներ (կրթական, իրավական, բնապահպանական, առողջ ապրելակերպի և այլ թեմաներով) այլ երիտասարդ շահառուների համար:
- գ) 2007թ. վերջին առնվազն 5000 երիտասարդ կօգտվի երիտասարդական կենտրոնների կողմից տրամադրած ծառայություններից:
- դ) Պարբերաբար երիտասարդական տեղեկատվական ծրագրեր կհեռարձակվեն հեռուստատեսությամբ և ռադիոյով, ինչպես նաև տեղեկատվություն կտրամադրվի մամուլով և ինտերնետով:

1.3.

- ա) 2007թ. վերջին, վավերացված կլինի 2000 թվականի մայիսի 11-ին ընդունված «Երիտասարդների միջազգային երկարաժամկետ կամավորական աշխատանքների խթանման եվրոպական հռչակագիրը»:
- բ) 2006թ. վերջին մշակված կլինի Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգի նախագիծը:
- գ) 2007թ. վերջին 5000 երիտասարդ մասնակցած կլինի երիտասարդական և կամավորական միջոցառումների:

Գերակայություն 2. Ընդլայնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունները

Հայաստանի Հանրապետության երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակը բավականին բարձր է: Կրթական համակարգը երիտասարդներին չի նախապատրաստում աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին («հմտությունների պակաս»): Պետությունը պետք է շտկի այս բացը՝ ապահովելով մասնագիտական ուսուցում, որն իրապես կգարգացնի անհրաժեշտ հմտություններ և կարողություններ: Պետք է նպաստավոր միջավայր ստեղծել գործարարության և զբաղվածության համար՝ երիտասարդներին մղելով ձեռնարկատիրական նախաձեռնությունների: Պետք է խորացնել արդյունավետ համագործակցությունը կրթական և ուսուցում կազմակերպող այլ հաստատությունների, զբաղվածության կենտրոնների, մասնավոր հատվածի և այլոց միջև, որոնք իրավասու են որոշումներ կայացնել հանրապետական և տեղական մակարդակներով: Երիտասարդներին հնարավորությունների ընձեռումը պետք է լինի մեր գործողությունների սկզբունքը՝ զբաղվածության ոլորտում:

Սպասվող արդյունքներ

- 2.1. Երիտասարդական կենտրոններում ստեղծված կլինի տեղեկատվական բազա և կմատուցվեն խորհրդատվական ծառայություններ, կտրամադրվեն մասնագիտական կողմնորոշման հնարավորություններ:
- 2.2. Երիտասարդներին մատչելի կլինեն փոքր և միջին ձեռներեցությանը վերաբերող տեղեկատվությունը, ուսուցումը և վարկային միջոցները:

2.3. Գյուղի երիտասարդությունը ձեռք բերած կլինի գյուղատնտեսական ոլորտի արդյունավետությունը բարձրացնող նորարարական գաղափարների կիրառման հմտություններ և կարողություններ:

Գործողություններ`

Տես` հավելված 2:

Ցուցանիշներ

2.1.

- ա) Երիտասարդական կենտրոնները և Հայաստանի Հանրապետության զբաղվածության գործակալության տարածքային մարմինները ստեղծած կլինեն համագործակցության գործուն համակարգեր:
- բ) 2007թ. վերջին Հայաստանի Հանրապետության զբաղվածության գործակալության տարածքային մարմիններ և երիտասարդական կենտրոններ դիմած երիտասարդների առնվազն 5-8%-ը տեղավորված կլինի աշխատանքի:
- գ) 2007թ. վերջին իրենց հմտությունները աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով հատուկ դասընթացների միջոցով ուսուցում անցած երիտասարդների թիվը կգերազանցի 1000-ը:
- դ) Հայաստանի Հանրապետության զբաղվածության գործակալության տարածքային մարմիններում կազմված կլինեն գործատուների, իսկ երիտասարդական կենտրոններում` աշխատանք փնտրող երիտասարդների, շրջանավարտների տվյալների բազաներ:

2.2.

- ա) 2007թ. վերջին ձեռներեցությանը վերաբերող ուսուցողական դասընթացներ կկազմակերպվեն երիտասարդական բոլոր կենտրոններում:
- բ) 2007թ. վերջին ձեռներեցության մասին դասընթացներին մասնակցած կլինի առնվազն 1000 երիտասարդ:

2.3.

- ա) 2007թ. վերջին գյուղական շրջանների երիտասարդների համար բոլոր մարզերում գյուղատնտեսության վարման մեթոդների, գյուղմթերքների մշակման, շուկայավարման և գործարար կառավարման թեմաներով դասընթացներ կկազմակերպվեն:
- բ) 2007թ. վերջին գյուղական զբոսաշրջության հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրված կլինի բոլոր մարզերում:

Գերակայություն 3. Խթանել առողջ ապրելակերպը

Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում ի հայտ եկան հասարակության ֆիզիկական և հոգևոր առողջությանն առնչվող մի շարք նոր ռիսկեր, որոնք բացասական ներգործություն են ունենում նաև երիտասարդների վրա:

Երիտասարդների ավելի մեծ մասն է վաղ տարիքում սկսում ծխել, օգտագործել ոգելից խմիչքներ, թմրամիջոցներ և առողջության համար վնասակար այլ նյութեր: Դպրոցում տրվող թերի գիտելիքները հանգեցնում են երիտասարդների ֆիզիկական և հոգևոր արատներին, առողջության համար վնասակար սովորույթների տարածմանը, սեռական կյանքին անպատրաստվածությանը, չպաշտպանված սեռական հարաբերություններին, սեռավարակների (մասնավորապես՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի) տարածմանը, ինչպես նաև անցանկալի հղիություններին: Աղքատությունը երիտասարդների՝ վերոնշյալ ռիսկերին ենթարկվելու ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծումը: Ուստի հարկ է բարձրացնել առողջ ապրելակերպի վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության մակարդակը, նրանց ապահովել բավարար տեղեկատվությամբ և տրամադրել համապատասխան ծառայություններ:

Սպասվող արդյունքներ

- 3.1. Երիտասարդներին մատչելի կլինեն առողջապահական համակարգի շրջանակներում ստեղծված համապատասխան ծառայությունները:
- 3.2. 14-18 տարեկաններն իրազեկված կլինեն առողջ ապրելակերպի մասին և հնարավորություն կունենան օգտվելու իրենց համար ստեղծված վերարտադրողական առողջությունը խթանող ծառայություններից:
- 3.3. 14-30 տարեկան խոցելի խմբերի պատանիներին ու երիտասարդներին մատչելի կլինի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և նրա կանխարգելմանը վերաբերող տեղեկատվությունը:

Գործողություններ՝

Տես՝ հավելված 2:

Ցուցանիշներ

- 3.1.
 - ա) 2007թ. վերջին, երիտասարդական կենտրոններին կից հիմնադրված կլինի նպաստավոր ֆիզկուլտուրային, առողջապահական ծառայություններ առաջարկող առնվազն 10 կենտրոն, և այդ ծառայություններից օգտվել ցանկացող երիտասարդների թիվը ավելացած կլինի առնվազն 10%-ով:
 - բ) 2007թ. վերջին երիտասարդների համար ստեղծված կլինի նպաստավոր ֆիզկուլտուրային, առողջապահական ծառայություններ մատուցող կենտրոնների ցանց, որի միջոցով համապատասխան տեղեկատվություն կփոխանակվի և կբարելավվի մատուցվող ծառայությունների որակը:
- 3.2.
 - ա) 2006թ. վերջին՝ 35, 2007թ. վերջին՝ 40 ուսուցչի համար կազմակերպված կլինեն առողջ ապրելակերպի խթանմանը և վերարտադրողական առողջությանը վերաբերող վերապատրաստման դասընթացներ:
 - բ) 2006թ. վերջին առնվազն 1000 և 2007թ. վերջին՝ առնվազն 2000 պատանիներ և երիտասարդներ կստանան առողջ ապրելակերպին և վերարտադրողական առողջությանը վերաբերող ուսուցում՝ մասնագետ ուսուցիչների կողմից:
 - գ) 2006թ. վերջին առողջ ապրելակերպը խթանող դասացանկ ներմուծված կլինի 30 դպրոցում:

- դ) Դպրոցներում՝ 14-18 տարեկան պատանիների և երիտասարդների շրջանում կիրականացվեն առողջական վիճակի (հատկապես՝ վերարտադրողական) հետազոտություններ:
- ե) 2006-2007թթ. տարեկան առնվազն 1000 երիտասարդ կմասնակցի առողջ ապրելակերպը խթանող միջոցառումների (հավաքներ, մրցույթներ և այլն):

3.3.

- ա) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և հասարակական կազմակերպությունները կիրականացնեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ծրագրեր:
- բ) 2006թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունած կլինի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ազգային ծրագիրը:
- գ) Խոցելի խմբերի երիտասարդների համար հատուկ ծրագիր ներառված կլինի ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելման ազգային ծրագրում:

Գերակայություն 4. Բարձրացնել երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակը և երիտասարդության շրջանում խթանել հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը

Անհրաժեշտ է իրականացնել համակարգված միջոցառումներ, որոնք կծառայեն երիտասարդների շահերին և կներգրավեն նրանց հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի ձևավորման գործում: Համակարգողի դերը հանձնարարված է Հայաստանի մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչությանը: Անհրաժեշտ է պայմաններ և աջակցություն ապահովել այն կազմակերպությունների ու անձանց համար, որոնք աշխատում են երիտասարդների հետ և նրանց համար: Պետք է երիտասարդական աշխատողների և կամավորական երիտասարդ առաջնորդների համար կազմակերպել ուսուցողական որակյալ դասընթացներ: Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչությունը պետք է համակշռի իշխանության պետական և տեղական մարմինների՝ երիտասարդության հարցերով զբաղվող ստորաբաժանումներն ու ծրագրերը և ներգրավի հասարակական կազմակերպություններին:

Պարբերաբար պետք է ուսումնասիրել և գնահատել երիտասարդների վիճակը:

Սպասվող արդյունքներ

- 4.1. Պետական կառավարման մարմինները կունենան անհրաժեշտ միջոցներ և տեղեկատվություն՝ նպաստելու համար երիտասարդների կարիքների բավարարմանը և իրավունքների իրացմանը:
- 4.2. Կսերտանա պետական կառավարման մարմինների, մասնավոր կառույցների և հասարակական երիտասարդական կազմակերպությունների համագործակցությունը:
- 4.3. Կբարձրանա երիտասարդական պետական քաղաքականության համակարգվածության մակարդակը:
- 4.4. Երիտասարդության շրջանում կբարձրանա հոգևոր-մշակութային կրթվածության, ազգային գիտակցության, հայրենասիրական դաստիարակության մակարդակը:

4.5. Կամրապնդվեն կապերն ու համագործակցությունը Հայաստանի և Սփյուռքի երիտասարդության միջև, ինչը կնպաստի հայ մշակույթի զարգացմանը, ազգային արժեքների պահպանմանն ու տարածմանը, հայրենասիրական ոգու խթանմանը:

Գործողություններ`

Տես` հավելված 2:

Ցուցանիշներ

4.1.

- ա) Մինչև 2006թ. վերջը պատրաստ կլինի Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի նախագիծը:
- բ) Կիրականացվեն երիտասարդական ոլորտի հետազոտություններ:
- գ) Կկազմակերպվեն հատուկ դասընթացներ պետական և ոչ պետական կառույցների (մարզպետարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և այլն) երիտասարդական աշխատողների համար:

4.2.

- ա) Պետական կառավարման մարմինների և մասնավոր կառույցների ու հասարակական երիտասարդական կազմակերպությունների համատեղ իրականացրած ծրագրերի թիվը կաճի, ինչը կնպաստի սույն ռազմավարության իրականացմանը:

4.3.

- ա) Առնվազն 3 ամիսը մեկ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդության հարցերի խորհրդի շրջանակներում կկազմակերպվեն հանդիպումներ, որոնց ընթացքում կներկայացվի երիտասարդության ոլորտում ձեռնարկած միջոցառումների մասին տեղեկատվություն:
- բ) Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը` ի դեմս աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության, կանոնավոր աշխատանքային հանդիպումներ կկազմակերպի երիտասարդական ոլորտում գործող պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:
- գ) Պետական երիտասարդական քաղաքականության մշակման կամ փոփոխման ընթացքում հաշվի կառնվեն երիտասարդական ոլորտի հետազոտությունների արդյունքները:

4.4.

- ա) 2007 թվականին հանրապետության կրթական համակարգում և բանակում իրականացված կլինեն ազգային (հոգևոր, մշակութային) արժեքների ճանաչողության և ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացմանն ուղղված կրթա-դաստիարակչական, ուսուցողական համալիր ծրագրեր:
- բ) Տարեկան 1000 երիտասարդ այցելած կլինի Հայաստանի և Արցախի պատմական և հոգևոր-մշակութային վայրեր:

- գ) Տարեկան առնվազն 5 մշակութային միջոցառում, երիտասարդական այցելություն կկազմակերպվեն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասեր:
- դ) Կկազմակերպվեն հատուկ դասընթացներ պետական և ոչ պետական կառույցների (մարզպետարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և այլն) երիտասարդական աշխատողների համար: Տարեկան 200 երիտասարդ մասնակցած կլինի տարբեր դասընթացների, սեմինարների:

4.5.

- ա) Տարեկան կհեռարձակվի առնվազն 5 հեռուստահաղորդում:
- բ) Տարեկան առնվազն 160 սփյուռքահայ երիտասարդական տարբեր միջոցառումների մասնակցելու նպատակով այցելած կլինի Հայաստան:
- գ) Սփյուռքահայ երիտասարդների մասնակցությամբ համահայկական բնույթի տարեկան առնվազն 5 մրցույթ-ակցիա կազմակերպված կլինի և կլուսաբանվի ՁԼՄ-ների միջոցով:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Իրագործում, դիտարկում, ֆինանսավորում և գնահատում

Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչությունը պետք է ապահովի երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության ամենօրյա իրագործումը՝ ունենալով գործողությունների երկու ծրագիր: Առաջինը պետք է ներառի 2006-2007 թվականները, երկրորդը՝ մինչև 2012թ. ժամանակահատվածը: Տարբեր նախարարություններ ու պետական կառավարման այլ մարմիններ, մասնավորապես՝ կրթության և գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի, պաշտպանության նախարարությունները, ինչպես նաև տարածքային կառավարման պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է իրենց ավանդը ներդնեն այս գործողությունների ծրագրում՝ տրամադրելով տեղեկատվություն, ինչպես նաև համակարգելով ու համապատասխանեցնելով իրենց քայլերը:

Համակարգումը և մոնիթորինգը պետք է ապահովվեն նախարարների տեղեկալների մակարդակով՝ միջգերատեսչական կանոնավոր հանդիպումների և աշխատանքային հանդիպումների միջոցով: 3 ամիսը մեկ վարչապետի նախագահությամբ իրավիրվող միջգերատեսչական հանդիպումներում որոշվում են ռազմավարության իրականացման հերթական քայլերը, համապատասխան նախարարություններին հանձնարարվում է այդ նպատակով ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ՝ ներկայացնելով ամենամյա զեկուցագրեր: Աշխատանքային կանոնավոր հանդիպումները նախապատրաստում, անցկացնում և նախագահում է Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչությունը, որպեսզի լիարժեքորեն համակարգվեն ռազմավարության իրագործման աշխատանքները: Պարբերական խորհրդակցություններ կանցկացվեն ռազմավարության իրականացման միջոցառումների մասին, որոնց ընթացքում կմշակվեն երիտասարդների և քաղաքացիական հասարակության աշխատանքները համատեղելու ծրագրերը:

Հնարավորության սահմաններում պետք է գործողություններ կատարվեն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ: Հայաստանի Հանրապետության վարչապետը պետք է վերահսկի երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության իրագործումը՝ Հայաստանի Հանրապետության աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրի համատեքստում:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը և 2006-2007թթ. գործողությունների ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության միջնաժամկետ ծախսային ծրագրի մի մասն են:

ՀՀ պետական բյուջեից երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի համար 2006 թվականի ֆինանսավորման չափն հաստատվել է ՀՀ 2006 թվականի պետական բյուջեով և կազմում է 316223.4 հազար դրամ, իսկ 2007 թվականին առաջարկվող ֆինանսավորման չափն ընդգրկվել է ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ներկայացված 2007-2009թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) հայտում և ներկայացվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:


Պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության միջնաժամկետ գնահատումը պետք է կատարվի միջազգային անկախ կազմակերպությունների կողմից իրականացված՝ երիտասարդական քաղաքականության մոնիտորինգի արդյունքների հիման վրա, որը կիրականացվի 2007 թվականին:

Մասնակցային գործընթացը

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարությունը մշակվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության կողմից՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (Յունիսեֆ) աջակցությամբ:

Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նպատակն է՝ ապահովել մասնակցային և թափանցիկ մի գործընթաց պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների, նախաձեռնող խմբերի, ինչպես նաև ուշադրությունից դուրս մնացած երիտասարդների մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականությունը իրականացնող կառույցները և քաղաքականությանն առնչվող հասարակական կազմակերպություններն ու հիմնադրամները



2006-2007թթ. երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության գործողությունների ծրագիր և միջոցառումների ցանկ

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1. Խթանել հասարակական կյանքին երիտասարդների գործուն մասնակցությունը					
Նպատակ	Գործողություններ	Իրականացնողներ	Իրականացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	
1. Խթանել երիտասարդների մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացին (համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում)	1. «Համայնքային և տարածաշրջանային կյանքին երիտասարդների մասնակցության եվրոպական խարտիային միանալու մասին» ՀՀ ազգային ժողովի որոշման նախագիծ	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2006 թվական	-	
	2. «Երիտասարդների միջազգային երկարաժամկետ կամավորական աշխատանքների խթանման եվրոպական հռչակագրի վավերացման մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծ	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2007 թվական	-
	3. «Հայաստանի Հանրապետությունում ոչ ֆորմալ կրթության հայեցակարգի» մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, մարզպետներ	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	4. ՀՀ մարզպետարաններին կից երիտասարդական հարցերի խորհուրդների ստեղծում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, մարզպետներ	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006 թվականի վերջի դրությամբ	ՀՀ պետական բյուջե
	5. Երիտասարդական քաղաքականության դիտարկման (մոնիթորինգ) անցկացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	6. «Պետական երիտասարդական քաղաքականությունը ՀՀ մարզերում» այցելություն-խորհրդակցությունների կազմակերպում ՀՀ մարզեր	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե

	7. Երիտասարդական կենտրոնների ² հիմնում ԶԶ մարզերում (Լոռի, Շիրակ, Սյունիք, Տավուշ, Գեղարքունիք, Վայոց ձոր, Կոտայք, Արարատ, Արմավիր, Արագածոտն)	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006 թվականի վերջի դրությամբ	ԶԶ պետական բյուջե
	8. Երիտասարդական կենտրոնների գործարկում	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականների ընթացքում	ԶԶ պետական բյուջե
	9. Ոչ ֆորմալ կրթության մեթոդների կիրառմամբ դասընթացների (կրթական, իրավական, բնապահպանական, առողջ ապրելակերպի և այլ թեմաներով) շարունակական անցկացում	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ԶԶ պետական բյուջե.
	10. ԶԶ-ում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների գործունեության և հասարակական կյանքին երիտասարդության մասանկացության խթանմանն ուղղված ծրագրեր	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ԶԶ պետական բյուջե
	11. Երիտասարդների խնդիրներին առնչվող երիտասարդական տեղեկատվական ծրագրերի կազմակերպում և հեռարձակում հեռուստատեսությամբ և ռադիոյով, երիտասարդական թերթի հրատարակում, տեղեկատվության տրամադրում մամուլով և ինտերնետով	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ԶԶ պետական բյուջե

ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ 2. Մեծացնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունները

Նպատակ	Գործողություններ	Իրականացնողներ	Իրականացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
2. Նպաստել Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարմանը և երիտասարդության շրջանում գործազրկության մակարդակի նվազեցմանը	1. Երիտասարդական կենտրոններում աշխատանք փնտրող երիտասարդների տեղեկատվական բազայի ստեղծում, կարիերայի օրերի կազմակերպում, խորհրդատվական ծառայությունների մատուցում	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ԶԶ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն	2006-2007 թվականներ	ԶԶ պետական բյուջե
	2. Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման, երիտասարդության շրջանում փոքր և միջին ձեռներեցության, գյուղական տուրիզմի զարգացման նպատակով հատուկ դասընթացների, ծրագրերի իրականացում	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ԶԶ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	2006-2007 թվականներ	ԶԶ պետական բյուջե
	3. Երիտասարդ ընտանիքների սոցիալական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի կազմակերպում	ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ԶԶ պետական բյուջե

² Տվյալ մարզում ԶԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ծրագրի իրականացում «Երիտասարդական կենտրոնների» ստեղծում տեղական ինքնակառավարման մարմինների, տեղի հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ որոնց նպատակն է՝ պետական երիտասարդական քաղաքականությունը հասանելի դարձնել մարզերի երիտասարդությանը, ծրագրերում առավել արդյունավետ կերպով ներգրավել նրանց, բարձրացնել մարզերի երիտասարդության իրազեկության մակարդակը երիտասարդական քաղաքականության վերաբերյալ: Երիտասարդական կենտրոնները գործելու են որպես ռեսուրս կենտրոններ, ուր երիտասարդները հնարավորություն կունենան օգտվել իրենց անհրաժեշտ բազմազան ծառայություններից (իրավաբանական և առողջապահական խորհրդատվություն, համակարգչային ծառայություններ, գրադարան, ընթերցասրահ), կազմակերպվող բազմաբնույթ դասընթացների միջոցով ստանալ նոր գիտելիքներ, ձեռք բերել մասնագիտական կողմնորոշում և վերապատրաստվել, կազմակերպել իրենց ազատ ժամանակը:

	4. Հաշմանդամ և խոցելի խմբերի երիտասարդների սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծրագրեր	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	5. Սոցիալապես անապահով երիտասարդների, երիտասարդական ՀԿ ներկայացուցիչների, ուսանողների, բանակից զորացրվածների համար համակարգչային և օտար լեզվի դասընթացների կազմակերպում, անվճար իրավաբանական խորհրդատվության տրամադրում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
ԳԵՐՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3. Խթանել երիտասարդության առողջ ապրելակերպը				
Նպատակ	Գործողություններ	Իրականացնողներ	Իրականացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
3. Ունենալ հոգեպես և ֆիզիկապես առողջ երիտասարդություն	1. Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպաստակառնողված զանգվածային մարզական միջոցառումների, համերգների, քարոզարշավների, կլոր սեղանների, թոք-շոունների, մրցույթների կազմակերպում և իրականացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտե	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	2. Երիտասարդական կենտրոններում բարյացական ծառայությունների մատուցում երիտասարդների համար (առողջապահական ծառայություններ, խորհրդատվություններ)	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	3. Դեռահասների և երիտասարդների վերարտադրողական առողջության բարելավման ծրագիր	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	4. Ուսումնական հաստատություններ հաճախող երիտասարդների համար ՄԻՎ/ՁԻԱՀ-ի մասին իրազեկության ապահովման և կանխարգելման նպատակով կրթական-տեղեկատվական միջոցառումների մշակում և իրականացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	5. Երիտասարդների շրջանում «հավասարը՝ հավասարին» մեթոդով կրթության աջակցություն և իրականացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	6. Երիտասարդների համար ՄԻՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական միջոցառումների, համերգների, քարոզարշավների, կլոր սեղանների, թոք-շոունների կազմակերպում և իրականացում, կրթական-տեղեկատվական ծրագրերի մշակում և իրականացում, նյութերի հրատարակում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե

	7. Բանակում և ազատագարկման վայրերում գտնվող երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխարգելմանն ու անվտանգ վարքագծի ձևավորմանն ուղղված ծրագրերի աջակցություն	ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
--	---	---	---------------------	-------------------

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 4. Բարձրացնել երիտասարդական պետական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակը և երիտասարդության շրջանում խթանել հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակությունը

Նպատակ	Գործողություններ	Իրականացնողներ	Իրականացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
4. Ջարգացնել երիտասարդների մարդկային և ինստիտուցիոնալ կարողությունները և բարձրացնել հասարակության երիտասարդների մասին գիտելիքների մակարդակը	1. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի նախագծի մշակում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2005 թվական – 2006 թվականի վերջ	ՀՀ պետական բյուջե
	2. Երիտասարդության հետ տարվող աշխատանքների գծով մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը նպատակաուղղված «Երիտասարդ առաջնորդների դպրոց» դասընթացների կազմակերպում մարզային երիտասարդական կենտրոններում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	3. Երիտասարդական այցելությունների, շինջոկատների կազմակերպում Արցախ, սահմանամերձ շրջաններ, Ջավախք	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	4. Բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումների վերաբերյալ ուսանողության իրազեկմանը, առկա խնդիրների վերհամմանը և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	5. Երիտասարդ գիտնականների համաժողովների, գիտական նստաշրջանների կազմակերպում, միջազգային խորհրդակցություններին, կոնֆերանսներին և դասընթացներին ուսանողների և երիտասարդ գիտնականների մասնակցությանն աջակցություն, գիտական հոդվածների, աշխատանքների, կոնֆերանսների նյութերի տպագրություն	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	6. Հոգևոր-դաստիարակչական ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
	7. Հանրապետության երիտասարդության շրջանում, ուսումնական հաստատություններում և բանակում ազգային արժեքների ճանաչողության և ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված կրթադաստիարակչական, ֆիզկուլտուրային, առողջարարական, ուսուցողական ծրագրերի իրականացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե

8. Համահայկական, հանրապետական երիտասարդական փառատոների, համաժողովների, գիտաժողովների կազմակերպում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
9. Միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում, այլ երկրների երիտասարդության ոլորտում փորձի փոխանակում, միջազգային հանդիպումներին, փառատոներին, խորհրդաժողովներին, մարզական միջոցառումներին հայաստանյան պատվիրակությունների մասնակցությանն աջակցություն, երիտասարդության ոլորտում միջպետական, միջազգային համաձայնագրերի նախագծերի նախապատրաստում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
10. Երիտասարդ տաղանդների բացահայտմանն ուղղված ցուցահանդեսների և մրցույթ-փառատոների կազմակերպում, տաղանդավոր երիտասարդների խրախուսում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
11. Դեպի հայկական եկեղեցիներ և պատմամշակութային կոթողներ ուխտագնացություն-արշավների կազմակերպում, գիտաճանաչողական, վերականգնողական և բարեկարգման աշխատանքների իրականացում, երիտասարդական մարզամշակութային միջոցառումների անցկացում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
12. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացում, «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ -ի գործունեության ապահովում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե
13. Համահայկական և միջազգային նշանակության երիտասարդական միջոցառումների կազմակերպում, «Համահայկական միջազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ապահովում	ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարություն	2006-2007 թվականներ	ՀՀ պետական բյուջե